Ո՞ի մարդ իւր գործակատարին տուեց 1 երեքմանէթանոց և 2 արասանոց և հրամայեց որ մշակներին վարձ տայ, իւրաքանչիւրին երկու երկու արասի, իսկ մնացած փողը ինքն առնու. քանի մշակների բաժանեց և ի՞նչ մնաց իւր մօտ:

Եթէ մի հացը երկու կոպէկ արժէ, ուրեմն այդպիսի 9-ը հացի համար ի՞նչքան պէտք է տալ:

18 գուլպայ քանի գիւժին է անում:

18 ինձորը քանի մարդու կարելի է երեք երեք բաժանել:

Ինձ տուին 3 շայի, 4 կոպէկ և 2 գրօշ. 2 շայով ձուկ առայ, 2 կոպէկի հաց, 1 գրօշի աղ. ի՞նչքան փող մնաց ձեռիս:

2 շայուն և 8 գրօշին քանի պէտք է աւելացնենք, որ 19 կոպ. ստանանք:

Ինձ տուեցին 1 ուղալթուն, 1 շայի և 4 կոպ., հրամայեցին, որ 12 գրօշի սուրճ առնում, 6 կոպ. շաքար, 8 գրօշի կաթ, իսկ 3 կոպէկն բաժանեմ աղքատներին, մնացածը ո՞րքան է:

19 օրը, 19 գրուանքան, 19 դանիցը, 19 կոպէկը, 19 ամիսը, 19 արշինը գարձուցեք խոշոր անուանաւոր թուերի:

20, 30, 40 և այլն, աստիճանները:

Տասնաւոր գրելու համար, մենք 1-ի աջ կողմը 0 գրեցինք, որով նշանակեցինք, որ ստացած միութիւնը տասնանգամ շատ է առաջին միութիւնից, զրօյի տեղ 1 գրելով, ցոյց տուեցինք, որ այդ 1 տասնաւորի հետ կայ և աւելորդ մի միաւոր, որ պատկանումէ երկրորդ տասնաւորին. յետոյ ամեն մի թուանշանի տեղ հետեւեալը դնելով (1-ի տեղ—2-ը, 2-ի—3-ը, 3-ի—4-ը և այլն), մենք հետ զհետէ բազմացրինք տասնաւորի հետ եղած, երկրորդ տասնաւորին վերաբերեալ միաւորները: Այս կերպով հասանք մինչև 19-ը, որ բազկացած է 1 տասնաւորից և 9 միաւորից, 9 միաւորին մինչևի 10-ը կամ տասնաւորը 1 միաւոր է պակաս, ուրեմն եթէ 9 միաւորին 1 միաւոր ևս աւելացնենք տասնաւոր կտանանք, ուրեմն առաջուայ տասնաւորի հետ միասին կունենանք 2 տասնաւոր (10+10) առանց ոչ մի միաւորի, այս պատճառով աջ կողմից երկրորդ տեղը գրած 2 թուանշանով ցոյց կտանք 2 տասնաւոր, իսկ առաջին տեղը զըրած զրօյով ցոյց կտանք, որ այդ երկու տասնաւորի հետ ոչ մի միաւոր չկայ: Այդ թիւը, այսինքն երկու տասնաւորը, կոչվումէ քսան, որ գրվումէ այսպէս 20: Ուրեմն տասնաւորների բազմանալը գրով նշանակվում է նոյնպէս, ինչպէս նշանակվում է միաւորների բազմանալը, միայն այն զանազանութեամբ, որ առաջ մենք գոտինումնենք աջ կողմի առաջին թուանշանը, իսկ այժմ կփոխենք երկրորդ տեղի թուանշանը, այսպէս ուրեմնը 30 նշանակում: Յ տասնաւոր կամ երեսուն, 40 նրանշանակում 4 տասնաւոր կամ քսասուն, 50 նշանակ, 5 տասնաւոր կամ յիսուն, 60 նշանակ. 6 տասնաւոր

կամ վաթսուն, 70 նշանակ. 7 տասնաւոր կամ եօթանասուն, 80 նշանակ. 8 տասնաւոր կամ ութսուն, 90 նշանակ. 9 տասնաւոր կամ իննսուն:

Ինչպէս որ նշանակեցինք առաջին տասնաւորի հետ դրած, երկրորդ տասնաւորին վերաբերեալ միաւորների աճիլը, նոյնպէս կեշանակենք այն միաւորների աճիլը, որոնք դրած են երկրորդ տասնաւորների հետ և վերաբերվում են Յ.դ տասնաւորին: Օսր օրինակ $20+1=21$ (բառնումէկին), $20+2=22$ (բառներկուսին), $30+3=33$ (երեսուներեքին), $30+4=34$ (երեսունչորսին) և այլն (24):

Հագուսմն

20, 30, 40 և այլն մինչև 90.

1-ով.

$20 \times 1 = 20$, $30 \times 1 = 30$, $40 \times 1 = 40$ և այլն.

$20 : 1 = 20$, $20 : 20 = 1$, $30 : 1 = 30$, $30 : 30 = 1$,

30×1 կամ $1 \times 30 = 30$ և այլն:

2-ով.

$20 : 2 = 10$, $30 : 2 = 15$, $40 : 2 = 20$, $50 : 2 = 25$.

$60 : 2 = 30$, $70 : 2 = 35$, $80 : 2 = 40$, $90 : 2 = 45$:

$10 \times 2 = 20$, $15 \times 2 = 30$. ($10 + 10 = 20$, $5 \times 2 = 10$.

$20 + 10 = 30$). $20 \times 2 = 40$, $25 \times 2 = 50$: (2×2 տասնաւոր = 4 տաս., 5 միաւ. $\times 2$ միաւ. = 10 միաւ. կամ 1 տաս., 4 տաս.+1 տաս.=5 տաս. կամ 50). $30 \times 2 = 60$, $35 \times 2 = 70$, $40 \times 2 = 80$, $45 \times 2 = 90$ և այլն (3-ով, 4-ով և այլն: 25)

Հարցմանք:

20 ստանալու համար ի՞նչ թիւեր պէտք է բազմապատկենք 2-ով, 4-ով, 5-ով. ի՞նչ թիւեր պէտքէ բազմապատկենք 2-ով+6, 3-ով+2, 2-ով+4, 2-ով+2, 4-ով+4:

30-ը հաւասար է որ թուին, բազմապատկած 2-ով, 3-ով, 5-ով, 6-ով, 10-ով, 4-ով+2, 3-ով+6, 3-ով+3:

Ի՞նչ թիւեր պէտք է բազմապատկենք 2-ով, 5-ով, 8-ով, 4-ով+8, 4-ով+4, և այլն, որ ստանանք 40:

Ի՞նչ հաւասար թուերից կարող են բազկանալ 20, 30, 40, 50 և այլն:

Ի՞նչ 2, 3, 4 և այլն թուերից կարող են բազկանալ 20, 21 և այլն.—30, 40, 50 և այլն:

20-ը որ թուերի երկապատիկն է, քառապատիկն, հնգապատիկն, տասնապատիկն:

30-ը որ թուի երկնապատիկն է, եռապատիկն, հնգապատիկն, վեցապատիկն, տասնապատիկն:

40-ը որ թուի կրկնապատիկն է, քառապատիկն, հընդապատիկն, ութապատիկն, տասնապատիկն, քսանապատիկն:

50-ը որ թուի կրկնապատիկն է, հնգապատիկն, տասնապատիկն:

60-ը որ թուի երկապատիկն է, եռապատիկն, քառապատիկն, վեցապատիկն, տասնապատիկն, քսանապատիկն, վաթսնապատիկն:

70-ը որ թուի երկապատիկն է, եօթնապատիկն, տասնապատիկն:

80-ը որ թուի երկապատիկն է, քառապատիկն, ութապատիկն, տասնապատիկն, քսանապատիկն, քառասնապատիկն:

90-ը ո՞ր թուի երկապատիկն է, եռապատիկն, իննապատիկն, տասնապատիկն, եռեսնապատիկն, իննսունապատիկն:

Հետեւեալ թուերը. 12, 14, 15, 16, 18, 21, 24, 25, 27, 28, 32, 35, 36, 42, 45, 48, 49, 54, 56, 63, 64, 72, 81 ո՞ր թուերի արտադրեալներն են:

6×4-ի արտադրեալի կիսի կէսը, երեք անգամ առած, ո՞րքան կանէ:

1-ուծումն. 6×4=24, 24-ի կէսը=12. տասներկուսի կէսը=6, 6×3=18:

6×4-ի արտադրեալի կիսի քառորդը, 5-ով բազմապատկած, ո՞րքան կանէ:

8×8-ի արտադրեալի ութերորդ մասը, 6-ով բազմապատկած, ո՞րքան կլինի:

9×5-ի արտադրեալի հինգերորդ մասը 6 անգամ առած, ո՞րքան կլինի.

8×6-ի արտադրեալի ութերորդ մասի կէսը 9-ով բազմապատկած, ո՞րքան կլինի և այլն:

Ո՞ւկ թուից հանած է 5-ի երեքպատիկը, և մնացել է 3-ի հինգապատիկը, ի՞նչ թիւ էր այն:

Հանած է 3-ի քառապատիկը, և մնացել է 2-ի եռապատիկը, ո՞ր թուից է հանած:

35-ից հանած է երեք անգամ 20-ի $\frac{1}{4}$ մասը, մնացորդը ո՞րքան է:

— 20-ի $\frac{1}{4}$ մասը=5, 3×5=15, 35—15=20:

Ի՞նչ թիւ կսահնանք, եթէ 2-ի քառապատիկը բազմապատիկնք 4-ի եռապատիկի կիսով:

3-ի եռապատիկը ո՞ր թուի իններորդ մասը կլինի, և այլն:

Խնդիրներ:

Տաս կոսպէկը անումէ մի ուղալթուն, 10 ուղալթունը — մի մանէթ, ուրեմն քանի՞ շայի ունի մի ուղալթունը, մի արասին, ջխտանոցը (երկու արասի) և մի մանէթը:
Վանի՞ երկուկոսէկնոց կայ մի մանէթի, չորս արասու, տասը շայու, մի արասու, երեք շայու, վեց գրօշի և մի ուղալթունի մլջ:

Վանի՞ շայի, ուղալթուն, արասի ունի ջխտանոցը և քանի՞ — մի մանէթը:

20, 30, 40 և այլն թաշկինակները քանի՞ դիւժին են անում:

ՈՒ օրը (գիշերուցերեկը) ունի 24 ժամ, 1 ժամը = 60 րոպէ, 1 րոպէն = 60 վայրկեան, ուրեմն երկու, երեք օրը քանի՞ ժամ՝ կունենան.

Այս ժամը քանի՞ վայրկեան ունի, իսկ $\frac{1}{4}$ -ը:

Կնշին են չաւասար՝ 20 օրը, 20 շաբաթը, 20 ամիսը, ամիսը 30 օր հաշուելով:

— 30 րոպէն, — 30 ժամը, — 30 օրը, — 30 շաբաթը, — 30 ամիսը և այլն:

Վանի՞ մանէթ է անում 40 ջխտանոցը, 40 արասին, 40 ուղալթունը, 40 շային:

ՈՒ փութը 40 գրուանքայ ունէ, ուրեմն երկու փութը քանի՞ գրուանքայ կանէ:

ՈՒ լիտը 9 գրուանքայ ունի, 5 լիտը ի՞նչքան կանէ, մի գրուանքան 96 մսնալ ունէ, ուրեմն կէս գրուանքան քանի՞ մսիսալ կանէ:

6 լիտը քանի՞ փութ կանէ:

Վարուանքայի 1/4-ը ստանալու համար, քանի՞ անդամ
պէտք է առնուլ մախալի չորրորդ մասը:

1/4, 1/2, 3/4 և 1 փութ ստանալու համար, քանի՞
անդամ պէտք է կրկնենք լիտրի 9-դ մասը:

Այս գիւժին մատիտին 30 կողէկ տուի, ուրեմն ի՞նչքան
տուի մի հատին:

Ո՞ի մշակ օրը ստանում էր մանէթի 1/4 մասը, և
երեք ամիս (ամիսը=30 օրին) շարունակ աշխատումէր, այն
երեք ամսում, բացի կիւրակի օրերից, դարձեալ 3 տօն
պատահեցաւ, ուրեմն ի՞նչքան փող վաստակեց նա:

$30 \times 3 = 90$, $4 \times 3 + 3 = 15$, $90 - 15 = 75$, $75 : 4 =$
18 (3). ուրեմն....և այլն:

Եթէ 15 ձուն մի արասի և երկու շայի արժէ, ի՞նչ-
քան արժէ 5 հատը, և ի՞նչքան—մինը:

30 արշին քաթանից պէտք է մեծ և փոքր շապիկ-
ներ կարել, ասենք թէ ամեն մի մեծ շապիկի համար
գործածած է 4 արշին, իսկ փոքրի համար 2 արշին,
ուրեմն այդ 30 արշին քաթանից քանի՞ մեծ և քանի՞
փոքր շապիկ կարելի է կարել:

ՀԱՐԻՄԵՐՈՐԴԻ, ԵՐԿՈՒ ՀԱՐԻՄԵՐՈՐԴԻ ԵՒ ԸՑՆ ԸՍՏԻՃԱՆՆԵՐԻ:

Գ միաւորների վերայ 1 աւելացնելով, մենք ստացանք
տասը կամ տասնաւոր, որ է նոր միութիւն, նոր կար-
գի թիւ, և ցոյց տալու համար թէ այդ նոր միու-
թիւնը տասն անգամ շատ է առաջնից, մենք նորա աջ
կողմումը գրեցինք 0. յետոյ փոխանակ զօյի 1, 2, 3,
4, 5, 6, 7, 8, 9 թուանշանները գրելով, մենք
ցոյց տուինք առաջին տասնաւորի հետ եղած միաւոր-

Ների հետզհետէ աճիլը, մինչև որ հասանք երկրորդ ամբողջ տասնաւորը, այն ժամանակ աջ կողմից երկրորդ տեղումը 1-ի փոխանակ գրեցինք 2, իսկ առաջին տեղումը դարձեալ 0 գրեցինք և սորանով նշանակեցինք, որ մենք երկու տասնաւորի հետ շունենք ոչ մի միաւոր. յետոյ նոյն կերպով նշանակեցինք 3, 4 և այլ տասնաւորները. նաև ցոյց տուինք, թէ ինչպէս հետզհետէ բազմանում են 2, 3, 4 և այլ տասնաւորների հետ եղած միաւորները, որոնք հետեւեալ տասնաւորին են վերաբերվում. այս կերպով հասանք մենք մինչև 99, այսինքն մինչև 9 տասնաւոր և տասներորդ տասնաւորի 9 միաւորը: Այժմ եթէ մենք այս 9 միաւորների վերայ աւելացնենք 1, կտանանք ամբողջ տասը, որ առաջին ինը տասնաւորների հետ կանէ տասը տասնաւոր. այս տասը տասնաւորները միասին բազկացնումն դարձեալ նոր միութիւն, դարձեալ նոր կարգի թիւ, այն է «հարիւր» կամ «հարիւրաւոր»:

Հյոյց տալու համար, որ այս երրորդ կարգի միութիւնը տասն անգամ շատ է երկրորդ կարգի միութիւնից, մենք նորան գրումենք աջ կողմից երրորդ տեղը. և որովհետեւ այս միութեան (հարիւրաւորի) հետ տասնաւոր և միաւոր չկան, ուստի նոցա տեղ աջ կողմում գրումենք զրօներ, այսինքն այսպէս-100, որ ցոյց է տալիս «հարիւր» կամ թէ «հարիւրաւոր»:

Խնչպէս հետզհետէ նշանակեցինք տասնաւորների մի, երկու, երեք և այլն անգամ կրկնվիլը, մի և նոյն կերպով կարելի է նշանակել և հարիւրաւորի մի, երկու և այլն անգամ կրկնվիլը, զորօրինակ 200 — երկու հարիւր, 300 — երեք հարիւր. 400 — չորս հարիւր, 500 —

Հինգ հարիւր, 600—վեց հարիւր, 700—եսթը հարիւր, 800—ութ հարիւր, 900—ինը հարիւր: Աարիւրաւորների հետ տասնաւորներ նշանակելու համար, աջ կողմից երկրորդ տեղում գրվում է այն թուանշանը, որը ցոյցէ տալիս տասնաւորի թիւը. իսկ հարիւրաւորի հետ միաւորներ նշանակելու համար, աջ կողմից առաջին տեղում գրվում է այն թուանշանը, որը ցոյց է տալիս միաւորների թիւը. այսպէս, 110—նշանակումէ հարիւր տասս կամ 100+10. 101—հարիւր մէկ կամ 100+1. 111— հարիւր տասնումէկ կամ 100+10+1 և այլն այլն այլն այլն մինչև 900-ի.

Չափումն.

$$100\cdot h, \quad 200\cdot h \text{ և } \text{այլն} \text{ մինչև } 900\cdot h.$$

$$100=100\times 1. \quad 100:1=100.$$

$$\begin{aligned} &= 50\times 2. \quad 100:2=50 \text{ և } \text{այլն}. \\ &= 30\times 3 (+10). \\ &= 25\times 4 \\ &= 20\times 5 \\ &= 16\times 6 (+4) \\ &= 14\times 7 (+2) \\ &= 12\times 8 (+4) \\ &= 11\times 9 (+1) \\ &= 10\times 10 \end{aligned}$$

$$200=200\times 1. \quad 200:1=200$$

$$\begin{aligned} &= 100\times 2. \quad 200:2=100 \text{ և } \text{այլն} \\ &= 60\times 3 (+20). \\ &= 50\times 4 \\ &= 40\times 5 \end{aligned}$$

$$= 33 \times 6 (+2)$$

$$= 25 \times 8$$

$$= 22 \times 9 (+2)$$

$$= 20 \times 10$$

$$= 10 \times 20$$

$$300 = 300 \times 1. \quad 300 : 1 = 300 \text{ հայլ}$$

$$= 150 \times 2$$

$$= 100 \times 3$$

$$= 75 \times 4$$

$$= 60 \times 5$$

$$= 50 \times 6$$

$$= 42 \times 7 (+6)$$

$$= 37 \times 8 (+4)$$

$$= 33 \times 9 (+3)$$

$$= 30 \times 10$$

$$= 15 \times 20$$

$$= 10 \times 30 :$$

Համիունմն հարիւրաւորների, ինչպէս որ չափում էին
միաւորները:

Ո՞հաւորներ:

$$1+1=2$$

$$2\times 1=2$$

$$2-1=1$$

$$2 : 1=2$$

Հարիւրաւորներ:

$$100+100=200$$

$$2\times 100=200$$

$$200-100=100$$

$$200 : 100= 2$$

$$100+100+100=300$$

$$3 \times 100 = 300$$

$$300 : 100 = 3$$

$$200+100=300$$

$$300-100=200$$

$$300-200=100$$

$$300 : 200 = 1 (100) \text{ и } \underline{\text{и}} \text{ в } \underline{\text{и}}$$

¶ *Использование таблицы* (27):

1	2	3	4	5	6	7	8	9	10
2	4	6	8	10	12	14	16	18	20
3	6	9	12	15	18	21	24	27	30
4	8	12	16	20	24	28	32	36	40
5	10	15	20	25	30	35	40	45	50
6	12	18	24	30	36	42	48	54	60
7	14	21	28	35	42	49	56	63	70
8	16	24	32	40	48	56	64	72	80
9	18	27	36	45	54	63	72	81	90
10	20	30	40	50	60	70	80	90	100

Խնչե՞ն է հաւասար

2×2 .

2×3 . 3×3 .

2×4 . 3×4 . 4×4 .

2×5 . 3×5 . 4×5 . 5×5 .

2×6 . 3×6 . 4×6 . 5×6 . 6×6 .

2×7 . 3×7 . 4×7 . 5×7 . 6×7 . 7×7 .

2×8 . 3×8 . 4×8 . 5×8 . 6×8 . 7×8 . 8×8 .

2×9 . 3×9 . 4×9 . 5×9 . 6×9 . 7×9 . 8×9 . 9×9 .

2×10 . 3×10 . 4×10 . 5×10 . 6×10 . 7×10 . 8×10 .

9×10 . 10×10 տար:

Տասնաւորների շափումներ (29).

$2 \times 11 = 22$ $2 \times 12 = 24$ $2 \times 13 = 26$

$3 \times 11 = 33$ $3 \times 12 = 36$ $3 \times 13 = 39$

$4 \times 11 = 44$ $4 \times 12 = 48$ $4 \times 13 = 52$

$5 \times 11 = 55$ $5 \times 12 = 60$ $5 \times 13 = 65$

Արթւրաւորների շափումներ:

$100 = 2 \times 50$, 4×25 , 5×20 , 10×10 :

$200 = 2 \times 2 \times 50 = 4 \times 50$, $2 \times 4 \times 25 = 8 \times 25$,

$2 \times 5 \times 20 = 10 \times 20$, $2 \times 10 \times 10 = 20 \times 10$:

$300 = 3 \times 2 \times 50 = 6 \times 50$, $3 \times 4 \times 25 = 12 \times 25$,

$3 \times 5 \times 20 = 15 \times 20$, $3 \times 10 \times 10 = 30 \times 10$, և այլն:

Արթւրաւորների շափումներով:

$220 = 10 \times 22$.

Եթէ $10 = 2 \times 5$, ուրիշ 220 = $2 \times 5 \times 22 = 22 \times 10$.

$960 = 10 \times 96$.

$$10 \times 2 \times 48 = 20 \times 48 = 48 \times 20 = 960.$$

$$10 \times 3 \times 32 = 30 \times 32 = 32 \times 30 = 30 \times 30 + 2 \times 30 = 960.$$

$$10 \times 4 \times 24 = 40 \times 24 = 24 \times 40 = 40 \times 20 + 40 \times 4 = 800 \\ + 160 = 960.$$

$$10 \times 8 \times 12 = 80 \times 12 = 12 \times 80 = 80 \times 10 + 30 \times 2 = 960.$$

Հարիւրաւորների շափումն, տասնաւորներով և
միաւորներով:

$$426 = 10 \times 42 + 6 \text{ կամ} = 4 \times 100 + 26.$$

$$10 \times 2 \times 21 + 6 = 20 \times 21 + 6.$$

$$30 \times 14 + 6 = 14 \times 30 + 6.$$

$$2 \times 5 \times 42 + 6 = 5 \times 84 + 6.$$

$$896 = 8 \times 100 + 8 \times 12 = 8 \times 112 = 2 \times 4 \times 112.$$

$$= 2 \times 448 = 2 \times 2 \times 224 = 10 \times 89 + 6 = 2 \times 5 \\ \times 89 + 6 = 2 \times 445 + 6:$$

Հարցմունք:

100-ը ո՞ր թուի հարիւրապատիկն է, յիսնապատիկը
և երկապատիկը, քսանապատիկը և տասնապատիկը:

200-ի քանի երրորդ մասը հաւասար է 1, 2, 3, 4,
5, 8, 10, 20, 25, 40, 50, 100-ին, կամ թէ

Ի՞նչ թիւ 200-ի մէջ պարունակվումէ 1, 2, 3, 4,
5 և այլն անգամ:

Ո՞րքանով 200-ը շատ է 100-ից և փոքր 300-ից:

Ո՞րքանով 300-ը շատ է 200-ից և փոքր է 400-ից:

Ո՞րքանով 400-ը շատ է 300-ից և փոքր 500-ից և այլն:

300-ը ո՞ր թուի երեքհարիւրապատիկ և եռապատիկն է, հարիւրյիսնապատիկ և երկապատիկ, հարիւրապատիկ և եռապատիկ, եօթանասնապատիկ և քա-

սապատիկ, վաթանապատիկ և հնգապատիկ, յիսնապատիկ և վեցապատիկ, երեսնապատիկ, քսանապատիկ, տասնապատիկ:

300-ի ո՞ր մասը հաւասար է 1, 2, 3, 4, 5, 6, 10, 20, 30-ի կամ թէ ո՞ր թիւը 300-ի մէջ պարունակվում է 1, 2, 3, 4, 5, 10, 20, 30 և այլն անգամ:

Խնչին է հաւասար $300 - 100 - 100 + 200$ բաժանած $100\cdot\text{ի}$:

100 ստանալու համար, ո՞ր թուից պէտք է հանել 100-ի կրկնապատիկը:

Խնչ հաւասար և անհաւասար թուերից կարելի է բաղկացնել 300-ը:

Եթէ 999 բաժանենք 3-ի, իսկ 888-ը՝ 2 ի, իւրաքանչիւր քանորդը ո՞րքան կլինի:

120 ո՞ր թուերի $\frac{1}{3}, \frac{1}{4}, \frac{1}{5}$ մասն է:

844-ի քառորդը ո՞րքան է:

844-ը ի՞նչ թուի քառապատիկն է:

Խնչ թիւ կարելի է 4 անգամ հանել 844-ից:

844-ի կեսը նոյն 844-ի քառորդից ո՞րքան է շատ:

Եթէ 333-ի երրորդ մասը հաւասար է մի անյայտ թուի $\frac{1}{6}$ -ին, ուրեմն ո՞րն է այն անյայտ թիւը:

Խնչին են հաւասար $743 + 221 \cdot 112 + 113 + 114 \cdot 111 + 212 + 313 \cdot 659 - 322 - 124$:

Ո՞ր թիւը 9-ը միաւորով աւելի է 53 տասնաւորից:

660-ը, 420-ը, 870-ը տասնաւորի քանապատիկ թուերն են:

Տասը ո՞ր թուերի 42-դ, 66-դ մասն է:

55 տասնաւորը ո՞րքանով փոքր է 600-ից, 660-ից, 993-ից:

10-ի վեցապատիկը, 100-ի քանապատիկն է:

Որ թիւը 8 տասնաւորով և 9 միաւորով առաւել է 490-ից: (490=49 տաս., 49 տ. +8 տ. =57 տ. =570, 570+9 տ. =579, ուրեմն....):

630-ի երրորդ մասը ո՞ր թուի քառորդն է:

680-ի 68 երրորդ մասի եւ 240-ի 24 երրորդ մասի գումարը ո՞րքան փոքր է 36-ի տասնապատկից:

Խնչպէս կազմվել է 130 13-ից, իսկ 28-ից—280:

670 ստանալու համար ի՞նչ թիւ պէտք է բազմապատկել տասն անգամ:

67-ը ի՞նչ թուի տասներորդ մասն է:

790-ից, 440-ից, 850-ից և այլն, ի՞նչ թիւ կարելի է տասն անգամ հանել առանց մնացորդի:

Խնչպէս պէտք է գտնենք 300-ի քսանհինգերորդ մասը:

220 ստանալու համար քանի անգամ պէտք է կրկնենք 44-ը:

426-ից ի՞նչ թիւ պէտք է հանել 5 անգամ, որ մնացորդը լինի 6:

980-ի և 377-ի տարբերութիւնը ո՞րքան է և ո՞ր թուի եռապատիկն է:

480-ի $\frac{1}{3}$ և $\frac{1}{4}$ մասերը միասին ի՞նչքան անգամ շատ կամ քիչ են այդ թուի կէսից:

660-ի $\frac{1}{20}$ և $\frac{1}{30}$ մասերի տարբերութիւնը ո՞րքան է:

326-ի և 418-ի գումարը քանի անգամ շատ է նոցա կէսերի գումարից:

Եթէ մի թիւ 3 անգամ առնելով, ստանանք մի արտադրեալ, 4-ով առաւել 100-ի կէսից, ուրեմն այդ արտադրեալը ո՞ր թուի եռապատիկը կլինի:

Լուծումն, 100-ի կեսից 4-ով առաւել թիւն է 54, 54-ը այն թուի եռապատիկն, և, որը 54-ի մէջ 3 անգամ է պարունակվում, իսկ 54-ի 3-դ մասը=18-ին, ուրեմն....և այլն:

100-ից 5-ով պակաս թիւը որի հետապատիկն է:

Եթէ 800-ի 20-երորդ մասը բազմապատկենք 5-ով, ստացածը ո՞ր թուի երկապատիկը կլինի:

Եթէ 9-ի տասնապատիկը բազմապատկենք 3-ի տասնապատկով, ո՞րքան կստանենք և այլն 30):

Խօնդիրներ:

100 մանելթից ես առաջին անգամ մօխնցի քառորդ մասը, յետոյ մնացածի երրորդ մասը, հարկաւոր է իմանալ թէ ամբողջ գումարի (100) քանի՞երորդ մասը մնաց ինձ:

Ո՞ի գիւղացի ծախեց 5 հատ սագ 3 մանեթ. 75 կոպէկով, ո՞րքանով ծախեց մէկը:

Տուած է 100 արշին քաթան և հրամայած է 1/5 մասը գործածել փոքր շապիկներ կարելու, այնպէս որ իւրաքանչիւրի համար գնայ միայն 4 արշին քաթան. մնացածիցը կարել մեծ շապիկներ, այնպէս որ իւրաքանչիւրի համար գնայ միայն 5 արշին քաթան. ուրեմն քանի՞ հատ շապիկներ գուրս եկան թէ մեծ, թէ փոքր: (100 : 5=20, 20 : 4=5, 100—20=80, 80 : 5=16. ուրեմն....և այլն),

Եթէ կէս հարիւր ձու արժէ 1 մանեթ 50 կոպէկ, ուրեմն ի՞նչքան արժէ մի ձուն, և ի՞նչքան պէտք է տալ 155 ձուին:

Վանի փուլը հաց է հարկաւոր ՅՅ մարդուն, որ ամէն
մէկին և օթն եօթն գրուանքայ հասնի:

Ե մարդ 60 օր աշխատեցին, մարդագլուխ մի արասի
ստանալով օրը, նոքա բոլորը միասին ի՞նչքան վա-
տակեցան և իւրաքանչիւրը նոցանից ի՞նչքան ստացաւ:

1 ուժումն, մի մարդ օրը ստանում էր 1 ար., Ե մարդ
6×1 ար., 6×60=360 ար. ուրեմն բոլորեքեանք ստա-
ցան....մանէլը, իսկ ամէն մէկը—....մանէլը:

Տուած է 82 մանէլը, որ մշակների մէջ բաժանվել
այսպէս. բոլոր գումարի կէսը—տաս տաս շայի. միւս
կէսի կէսը—հինգ հինգ շայի. իսկ մնացածը—մի մի
արասի. մշակների թիւը ո՞րքան էր:

ՊՐՈ. ԿՐՈ ՎԵՐԵՑԵԼ ԹՈՒԵՐԻ ԹՈՒԵԼԻԱՆ:

ԱՌԵՋԻՆ ԵՍՏԻ ՃԱՆ:

Ձևուարկութիւն կամ թուերի գասակարգութիւն:

ՈՒինից տասը միաւորին հասնելով մենք ստացանք
մի նոր միութիւն, նոր կարգի թիւ—այն է «տասը»
կամ «տասնաւոր», որը նոյնպէս կարող է թվուել
մինից մինչև տաս, տասներորդ տասնաւորը լրացնե-
լով, այսինքն 99-ին 1 աւելացնելով, մենք ստացանք
դարձեալ նոր միութիւն, դարձեալ նոր կարգի թիւ—«հա-
րիւր» կամ «հարիւրաւոր», որը նոյնպէս կարող է

թվուել մինից մինչև 10. տասներորդ հարիւրաւորը լրացնելով, մենք նորէն ստանում ենք նոր միութիւն, նոր կարգի թիւ — «Հաղար» կամ «Հաղարաւոր», որը նոյնպէս կարող է թվուել մինից մինչև տաս, այսինքն մի Հաղարից մինչև տասը Հաղար. այսպէս կշարունակենք 10-Հաղարից մինչև 100-Հզ., 100-Հաղարից — 10-Հր. Հզ., ուստի այս միութեան, այսինքն «Հաղարաւորի» դասաւորութիւնը երեք տեղ է բանում. Հարիւրաւորից յետոյ առաջին տեղում, այսինքն աջ կողմից սկսած չորրորդ տեղում, գրումներ Հասարակ Հաղարաւորները, 5-ր տեղում — տասն Հաղարաւորները, 6-ր տեղում — Հարիւր Հաղարաւորները:

Վիաւորների միութիւնները կոչվումեն առաջին կարգի միութիւններ, տասնաւորներինը — երկրորդ կարգի և այլն, իւրաքանչիւր յետագայ կարգը նախընթացի տասնապատիկն է. օրինակ վերառնունք 1-ը: Տասնապատկելով 1-ը կստանաք 10 (տաս):

« 10 « 100 (Հարիւր):

« 100 « 1000 (Հաղար, այսինքն 10 Հարիւր):

« 1000 « 10000 (տաս Հաղար կամ):

« 10000 « 100000 (Հարիւր Հաղար):

Եթէ վերջին օրինակում զրօների փոխանակ մէկեր զրենք, կստանանք

111,111

Հարիւր տասնումեկ Հաղար Հարիւր տասնումեկ.

կամ թէ

100 Հզ.+10 Հզ.+1 Հզ.+1 Հր.+1 տ.+1 միաւ.

Եթէ մէկերի փոխանակ գրենք 2, այն ժամանակ կստանանք

222,222

Երկու հարիւր քսաներկու հազար երկու հարիւր
քսաներկու.

կամ թէ

200 հշ.+20 հշ.+2 հզ.+2 հր.+2 տ.+2 միաւ.:
թիւս 405,060 պարունակումէ իւր մէջ «չորս հա-
րիւր հինգ հազար վաթսուն միաւորներ», որ երեսում
թուանշաների տեղերից:

Այդ թուի բաղադրող միութիւնները սոքա են.
400 հզ.+0 տ. հզ.+5 հզ.+0 հր.+6 տաս. +0 միաւ.:
900,009 (ինը հարիւր հազար ինը)=
900 հզ.+0 տ. հզ.+0 հզ.+0 հր.+0 տաս. +9 միաւ.:
999,999 (ինը հարիւր իննսունինը հազար ինը
հարիւր իննսունինը) = 900 հզ.+90 հշ.+9 հզ.+9 հր.
+9 տաս. +9 միաւ:

Եթէ այս վերջին թուի 9-ը միաւորներին աւելաց-
նենք ևս մէկ միաւոր, այն ժամանակ նոցա տեղ մենք
կստանանք տասնաւոր, որի հետ ոչ մի միաւոր չենք
ունենալ ուստի առաջուայ 9-ը միաւորների տեղ պէտք
է գրել 0, իսկ նոր ստացած տասնաւորը պէտքէ
աւելացնել 9 տասնաւորին. 9 տ. +1 տ.=10 տ.=100.
ուրեմն տասնաւորի տեղ պէտք է նոյնպէս 0 գրել, իսկ
նոր ստացած հարիւրաւորը պէտք է աւելացնել հետեւալ
9 հարիւրաւորին. 9 հար.+1 հար.=10 հար.=1000.
ուստի հարիւրաւորի տեղը պէտքէ գրել 0, և նոր ստա-
ցած հազարաւորը պէտքէ աւելացնել 9 հազարին. 9
հազ.+1 հազ.=10 հազ. այս տասը հազարը պէտք է
աւելացնել 9-ը տաս-հազարաւորին. 9 տ. հազ.+1 տ.
հազ.=100 հազ. ուրեմն հազարաւորի և տաս-հազա-

բաւորի տեղ մենք պէտք է գրենք 0. 900 հզ.+100 հզ.=10 հար.-հաղարաւորին կամ թէ հաղար անդամ հաղարին: Հաղար անդամ հաղարը նոյնպէս բաղկացնումէ նոր թիւ, նոր կարգի միութիւն, որ կոչվումէ միլիոն, այս տեղ ևս կարելի է թուել 1 միլիոնից մինչև 10 միլիոնը, 10 միլիոնից մինչև 100-միլ., 100-միլ.-ից մինչև 1000-միլ., 1000-միլ.-ից մինչև 10 հզ. միլ., 10 հզ. միլ.-ից մինչև 100 հազ. միլ., 100 հազ. միլ.-ից մինչև 10 հարիւր հաղար միլիոն և այլն:

Այժմ մենք գիտենք, թէ թուերը թուանշաններով գրելիս ինչպէս պէտք է գասաւորել աջ կողմից սկսած առաջին տեղը բռնումէ միաւորների կարգը, երկրորդ տեղը—տասնաւորների կարգը, 3-րդ տեղը—հարիւրաւորների, 4-րդ տեղը—հաղարաւորների, 5-րդ տեղը—տասնաղարաւորների, 6-րդ տեղը—հարիւր-հաղարաւորների, 7-րդ տեղը—միլիոնաւորների, 8-րդ տեղը—տասնմիլիոնաւորների, 9-րդ տեղը—հարիւր-միլիոնաւորների, 10-րդ տեղը—հաղար-միլիոնաւորների, 11-րդ տեղը—տասն-հաղար-միլիոնաւորների, 12-րդ երրորդ տեղը—հարիւր-հաղար-միլիոնաւորների կարգը:

Ձաւերի այս կերպ դասաւորութիւնը կոչվում է «Ձաւարկութիւն» 31):

Հարցմանք:

1-ն, 2-ր, 3-ր, 4-ր, 5-ր, 6-ր, 7-ր, 8-ր կարգի միութիւնները ինչպէս են կոչվում:

Աջ կողմից ո՞ր տեղն են գրվում հասարակ տասնաւորները, տասն-հաղարաւորները, տասնմիլիոնաւորները:

— Խսկ հասարակ հարիւրաւորները, հարիւր-հաղա-

բաւորնե՞րը, Հարիւր-միլիոնաւորնե՞րը, տաս-Հաղար-միլիոնաւորնե՞րը:

Եթէ աչ կողմից երկրորդ, 4-ր, 6-ր 8-ր տեղերում
զբոներ գրենք, իսկ իններորդ տեղում—5, եօթերոր-
դում—3, հինգերորդում—8, երրորդում—2, առաջին
տեղում—9. առցանից ի՞նչ թիւ կկազմվի: (Պարեցէք
այդ թիւը և վերլուծէք):

Վի միլիոնում քանի միաւոր, տասնաւոր, հարիւրաւոր, հազարաւորներ կան:

ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ

$\Psi_{\text{in}}(\sigma) = \delta(\omega_{\text{in}}/\sigma - 1)$

Այսպիսի արդեն յայտնի է այն գործողութիւնը, որը «գումարում» է կոչվում. գիտենք նոյնպէս թէ ինչ պէս են կոչվում գումարելու համար տուած թուերը, և գումարումից յետոյ ստացած ։ իւր: Որովհետեւ շատ եւ բազմանշան (*) թուեր բերանացի գումարելը անյարմար է, ուստի մեզ մնում է այժմ սովորել այդ գործողութեան գրաւոր կերպով կատարելու ձեր:

Օրինակի համար առենք թէ տուած է գումարելու յետագայ թուերը. $36+24+15+23+50$. բերանացի գումարելու ժամանակ այդ գործողութիւնը կատարումնք այսպէս $30+20+10+20+50=130$. $6+4+5+3=18$. $130+18=148$:

³⁰⁾ Խորաբանչւոր թշուանշանը՝ առանձին նշան է. ուստի թուերը կարող են լինել միանշան, երկանշան և այլն, առցելով թէ տառած թուի մէջ քանի՞ թշուանշան կը:

Ո՞ի և նոյն գործողութիւնը գրաւոր կերպով կատարելու ժամանակ աւելի յարմար է տուած թուերը գրել միմեանց տակ այսպէս.

36

24

15

23

50

18 միաւոր.

13 տասնաւոր,

148 միաւոր.

Կումարելու համար տուած թուերը այս կերպով գրելուց յետոյ, նոցա տակը զիծ են քաշում, որով ջոկում են այդ թուերը գումարից, նախ գումարում են միաւորները, յետոյ տասնաւորները, որոնք միաւորների չետ միասին կազմում են պահանջված գումարը, ինչպէս այս երեսում է մեր օրինակիցը:

Կումարման գրաւոր իսկական ձեւը աւելի համառօտ է.

36

24

15

23

50

148

Հետևեալ թուերը. 355+21+1430+2045+320 կարելի է գումարել երեք եղանակով.

1)	355	2)	355	3)	355
	21		21		21
	1430		1430		1430
	2045		2045		2045
	320		320		320
	3000		11		4171
	1000		160		
	160		1000		
	11		3000		
	4171		4171		

Վառմարենք գարձեալ 5946+847+239+5320:

5946	5946	5946
847	847	847
239	239	239
5320	5320	5320
10000	22	12352
2200	130	
130	2200	
22	10000	
12352	12352	

Այս օրինակներից պարզ տեսնում ենք,

1) Որ այս գործողութիւնը գրաւոր կերպով դիւրին կատարելու համար, պէտք է տուած թուերը միմեանց տակ գրել այնպէս, որ միաւորը լինի միաւորի տակ, տասնաւորը տասնաւորի տակ և այլն, որով կկազմվին միաւորների, տասնաւորների և այլն շարքեր:

2) Որովհետեւ ստորին կարգի միութիւնները գումարելուց շատ անգամ գոյանում են բարձրագոյն կարգի միութիւններ, ուստի աւելի յարմար է գումարումը

սկսել միաւորների շարքից. սորանից գոյացած բարձրագոյն միութիւնը հարկաւոր է աւելացնել հետևեալ շարքին, իսկ գումարած միութիւնների տակ գրել նոցա համապատասխանող միութիւնները, այսինքն միաւորները գրել միաւորների տակ, բայց նոր գոյացած տասնաւորը կամ տասնաւորները աւելացնել տասնաւորների շարքին, ինչպէս այս երեսում օրինակիցը:

Այսպէս գումարելով տուած թուերի միաւորները $6+7+9$, ստացանք 2 տաս. $+2$ միաւոր, ուստի 2 միաւորը պէտք է գրենք միաւորների շարքի տակ, իսկ 2 տ., աւելացնենք տասնաւորներին. 2 տ. $+4$ տ. $=6$ տ., $6+4=10$, $10+3=13$, $13+2=15$ տ. $=1$ հր. և 5 տ., ուստի 5 տ. պէտք է գրենք տասնաւորների շարքի տակ, իսկ 1 հարիւրը աւելացնենք հարիւրաւորներին. 1 հր. $+9$ հր. $=10$ հր., $10+8=18$. $18+2=20$, $20+3=23$. 23 հր. $=2$ հզր. $+3$ հր., ուստի 3 հր. պէտք է գրենք հարիւրաւորների շարքի տակ, իսկ 2 հզր. աւելացնենք հազարաւորներին. 2 հզր. $+5$ հզր. $=7$ հզր., 7 հզր. $+5$ հզր. $=12$ հզր.: Առովհետև այս 12 հազարը վերջին միութիւններ են, այս պատճառով բոլորը միասին լիովին գրում ենք, 2 հազարաւորը հազարաւորների տակ, իսկ 1 տաս. հազարաւորը գրումնենք 5 -երորդ տեղումը, ուր գրվումն առ հասարակ տաս. հազարաւորները:

Հետագայ օրինակներից

1) $3892+7214+4903$. 2) $3007+4008+6005$.

3892	3007
------	------

7214	4008
------	------

4903	6005
------	------

16009	13020
-------	-------

տեսնում ենք, որ եթէ մի շարքի թուերը գումարելուց
ստանում ենք միմիայն բարձրագոյն կարգի միութիւն-
ներ, զորօրինակ տասնաւորների շարքից — միմիայն հա-
րիւրաւորներ, կամ հարիւրաւորների շարքից — միմի-
այն հազարաւորներ, այն ժամանակ տասնաւորների շար-
քին տակ գրումնք 0, իսկ տասնաւորներից կազմված
հարիւրաւորները աւելացնումնք հարիւրաւորներին և
այլն:

9-ը տասնաւորին +1 տասնաւոր բաղկացաւ 10 տաս,
կամ միմիայն 1 հարիւրաւոր, ուստի տասնաւորների
շարքին տակ գրած է 0, իսկ բաղկացած 1 հր. աւելցրած
է հարիւրաւորներին. յետոյ 1 հար.+8 հր.+2 հր.+
9 հր. բաղկացաւ 20 հր. կամ թէ միմիայն 2 հզր.,
ուստի հարիւրաւորների շարքի տակ գրած է 0, իսկ 2
հզր. աւելացրած է հազարաւորներին, որոնցից (2+3+
7+4) ընդ ամենը բաղկացաւ 16 հազար 32):

ԵՐԻ ՈՐԴԻ ԱՍՏԻՃԱՆԻ

Հ ա ն ո ւ մ ն կ ա ն ո ւ մ ն կ ա ն ո ւ մ ն կ ա ն ո ւ մ ն :

Վայս գործողութիւնը (հանումն) մեզ արդէն յայտնի
է, մենք գիտենք նմանապէս, թէ ի՞նչպէս են անուան-
վում այս գործողութիւնը կատարելու համար տուած
թուերը և թէ ի՞նչ է մնացորդը կամ տարբերութիւնը:
Միանշան, երկանշան և մինչև անգամ եռանշան թուերը
մինը միւսից, այսինքն փոքրը, մեծից, բերանացի հա-
նելը շատ հեշտ է, բայց երբոր տուած թուերը բազ-
մանշան են, այն ժամանակ աւելի յարմար է գրաւոր
կերպով կատարել այս գործողութիւնը. այդ պարագայում

գորքը թիւը գրվումէ մեծի տակ, այսինքն հանելին նուազելու տակ և յետոյ փոքր թուի տակ քաշվումէ մի գիծ և տակը գրվում է գործողութիւնից յետոյ ստացած մնացորդը կամ տարբերութիւնը:

Դիցուք թէ տուած է 9456-ից հանել 7321 (9456 — 7321), այս գործողութիւնը կարող ենք երկու կերպ կատարել, առաջին՝ կարող ենք այս թուերը վերլուծել և մէկը միւսի տակ գրել այսպէս

$$\begin{array}{r} 9456 = 9000 + 400 + 50 + 6 \quad \text{նուազելի} \\ - 7321 = 7000 + 300 + 20 + 1 \quad \text{հանելի} \\ \hline 2000 + 100 + 30 + 5 \quad \text{մնացորդ կամ տարբե-} \\ \text{րութիւն:} \end{array}$$

Երկրորդ, այսպէս

$$\begin{array}{r} 9456 \quad \text{նուազելի} \\ - 7321 \quad \text{հանելի} \\ \hline 2135 \quad \text{մնացորդ կամ տարբերութիւն:} \end{array}$$

Երկրորդ եղանակը աւելի պարզ և համառօտ է:

Ուշապէտ ամրող հանելի թիւը միշտ փոքր է նուազելուց, բայց կարող է պատահել, որ հանելու թուի մի քանի միութիւնները մեծ լինին նուազելու համակարգ միութիւններից, այդպիսի դիպուածում նուազելի թուի այդ պակաս միութիւնների վրայ աւելացվում է նախընթաց (բարձրագոյն) կարգի միութիւններից մէկ հատը, ինչպէս կտեսնենք այս օրինակից

1768—679

1768

—679

1089

9-ը շատ է 8-ից մեկով, ուրեմն հանել կարելի չէ, ուստի նախընթաց 6 տասնաւորից պէտք է առնուլ 1 տ., $10+8=18$. $18-9=9$. հէնց այսպէս և նշանակած է. 7-ը տաս. կարելի չէ նոյնպէս հանել 5 տ.-ից, ուստի նախընթաց 7 հարիւրից, պէտք է առնուլ 1 հր. $100=10$ տաս. $10 + 5$ տ.= 15 տաս., $15-7=8$, այդ պատճառով ևս տասնաւորների շարքին տակ գրած է 8. բացի գորանից նուազելու մէջ մնումէ երկու կարգ, այն է $1000+600$. $1000+600=16$ հր., որից պէտք է հանել 6 հր., որովհետև $16-6=10$, ուստի մնացորդում կլինի 10 հր., իսկ բոլոր մնացորդը միասին= 1089 . ուրեմն 1768 և 679 թուերի տարբերութիւնը= 1089 , այսինքն թէ 1768-ը շատ է 679-ից 1089 միաւորներով կամ թէ 679 փոքր է 1768-ից նոյնպէս 1089 միաւորներով:

Ի՞այց եթէ նուազելու որ և իցէ կարգում 0 լինի, պէտք է հետեւեալ կարգից վեր առնուլ նոյնպէս մի միութիւն. իսկ եթէ հետ զհետէ երկու կամ երեք կարգերում զրօներ լինին, այն ժամանակ պէտք է վեր առնուլ զրօների առաջ եղած կարգի միութիւններից մէկ հատը և դարձնել բոլոր 0 ունեցող կարգերին, ինչպէս կտեսնենք հետեւեալ օրինակներից.

$$\begin{array}{r} 1) \quad 7400 \quad 2) \quad 7004 \quad 3) \quad 70000 \\ -3269 \qquad \qquad -3269 \qquad \qquad -32690 \\ \hline 4131. \qquad \qquad 3735. \qquad \qquad 37310. \end{array}$$

Եռաջին օրինակում 9-ը միաւորը չէ կարելի հանել 0 միաւորիցը, իսկ նախընթաց կարգիցը, այսինքն 0 տասնաւորիցը ոչինչ չէ կարելի վեր առնուլ, ուստի նախըն-

թաց հարիւրաւորիցը առնում ենք 1 հր., որից 1 տաս.
Հանելով աւելացնում ենք 0 միաւորի վերայ, այդ տա-
սիցը հանում ենք 9 միաւորը և մնացորդ ստանում ենք 1
միաւոր. մնացած 9-ը տասնաւորից 6 տաս, հանելով,
մնացորդ ստանում ենք 3 տաս., մնացած 3 հր.-ից 2 հր.
հանելով, մնացորդ ստանում ենք 1 հր. 7 հազարից 3
հր. հանելով, մնացորդ ստանում ենք 4 հազար:

Երկրորդ օրինակում նոյնպէս 9-ը միաւորը չէ կա-
րելի հանել 4 միաւորիցը, իսկ տասնաւորից և հա-
րիւրաւորիցը կարելի չէ ոչինչ վեր առնուլ, ուստի հար-
կաւոր է վեր առնուլ 7 հազարաւորիցը 1 հզր. և վեր-
լուծել այնպէս, ինչպէս վերել ցոյց ենք տուել այս-
պէս ուրեմն 9-ը միաւորը պէտք է հանել 14 միաւորիցը,
6 տաս, 9 տասնաւորիցը, 2 հր. 9 հարիւրաւորիցը, և
վերջապէս 3 հզր. 6 հազարաւորիցը:

Երրորդ օրինակում 0—0=0. բայց 9 տաս., 6 հր.
և 2 հզր. հանելու համար, հարկաւոր է վեր առնուլ տաս-
հազարաւորներից մէկը և վերլուծել մի և նոյն կերպով.
յետոյ 9-ը տաս, պէտք է հանել 10 տասնաւորիցը, 6 հր.
9 հարիւրաւորիցը. 2 հզր. 9 հազարիցը, 30 հզր, 60 հա-
զարիցը:

Ուրեմն մի և նոյն է, թէ տուած թուերը այսպէս
լինէին վերլուծված.

$$\begin{aligned} 1) \quad & 7000 + 300 - 90 + 10 \\ & - 3000 + 200 + 60 + 9 \\ \hline & = 4000 + 100 + 30 + 1 = 4131. \end{aligned}$$

$$\begin{aligned} 2) \quad & 6000 + 900 + 90 + 14 \\ & - 3000 + 200 + 60 + 9 \\ \hline & = 3000 + 700 + 30 + 5 = 3735. \end{aligned}$$

3) 6 ա. $\zeta q_+ + 9 \zeta q_- + 9 \zeta p_+ + 10 \text{ ա.} + 0 \text{ մ.}$

$- 3 \text{ ա. } \zeta q_+ + 2 \zeta q_- + 6 \zeta p_+ + 9 \text{ ա.} + 0 \text{ մ.}$

$= 3 \text{ ա. } \zeta q_+ + 7 \zeta q_- + 3 \zeta p_+ + 1 \text{ ա.} + 0 \text{ մ.} = 37310.$

Այս երկու գործողութիւնները, այսինքն գումարումը և հանումը, լիովին ընթերցասիրելուց յետոյ, գժուարին չէ ցոյց տալ թէ այս գործողութիւնները ինչով զանազանվում են միմեանցից: ‘Եսցա զանազանութիւնը այն է, որ գումարման մէջ յայտնի են (տուած են) մասները, բայց անյայտ է ամբողջը, որը պէտք է գտնել այն ինչ հանման մէջ յայտնի է ամբողջը և մի մասը, բայց անյայտ է միւս մասը, որը պէտք է գտնել:

25+16+34 այն ամբողջի (75-ի) մասներն են, որը պէտք է գտնել եթէ կամենում ենք ստուգել, թէ արդեօք գումարումը ճիշդ ենք շինել, այսինքն թէ այն իսկ գումարը ստացել ենք, որն որ պէտք էր ստանայինք, հարկաւոր է մասներից մինը, այսինքն գումարելի թուերից մինը (որն որ լինի մի և նոյն է) բաց թողնել, յետոյ մնացածները գումարել և նոցա գումարը հանել բոլոր մասների գումարիցը, եթէ մնացորդը հաւասար կլինի բաց թողած գումարելիքին, նշանակում: Որ գումարումը ճիշդ է կատարած:

25	25
16	$\frac{16}{75} - 50 = 25$
34	34
75.	50.

Հարցածունք:

Կ՞նչ զանազանութիւն կայ գումարման և հանման մէջ:

Գումարելու համար տուած թուերը ի՞նչպէս են կոչվում:

Գումարելուց յետոյ ստացած թիւը ի՞նչպէս է կոչվում:

Ո՞ր միութիւններից են սկսում գումարելը և ի՞նչ պատճառով:

Ի՞նչի՞ն են աւելացնում այն բարձրագոյն կարգի միութիւնները, որոնք գոյանում են ստորին կարգի միութիւնները գումարելուց, զորօրինակ տասնաւորները—միաւորներից, հարիւրաւորները—տասնաւորներից և այլն:

Գումարը ի՞նչ փոփոխութիւններ կը կրէ—

1) Եթէ գումարելիններից մինին աւելացնենք, դիցուք, 8, միւսին 11, երրորդին 22:

2) Եթէ գումարելիններից մինին աւելացնենք 7, միւսին 9, իսկ երրորդից հանենք 16:

3) Եթէ գումարից հանենք գումարելիններից մինը, գումարելիններից երկուսը, բոլոր գումարելինները կարգով:

Ի՞նչ փոփոխութիւններ կը կրէ մնացորդը կամ տարբերութիւնը,—

1) Եթէ ամբողջը, այսինքն նուազելին, մեծացնենք որ և իցէ թւով:

2) Եթէ նուազելին անփոփոխ թողնելով, որքան և իցէ մեծացնենք հանելին:

3) Եթէ և՛ նուազելի և՛ հանելի թուերին աւելացը նենք որ և իցէ թիւ նոյնութեամբ:

Եթէ հանելու միութիւնների թուանշանը առաւելինի իրան համապատասխանող նուազելու թուանշանիցը, այսինքն, եթէ, զորօրինակ, հանելու մէջ 8 միա-

ւոր լինի, իսկ նուազելու մէջ 5, այդպիսի ժամանակ
ի՞նչ պէտք է անել:

Կ՞նչպէս պէտք է վերլուծենը տաօնաւորներից, հա-
րիւրաւորներից և այլ կարգերից վերառած միութիւնները
ստորին կարգի պակասը լրացնելու համար:

Վառմարումը ի՞նչ գործողութեամբ է ստուգվում,
իսկ հանո՞ւմը:

Ո՞ր թիւն է կոչվում միանշան կամ միանդամ, և
ո՞րը—բազմանշան կամ բազմանդամ:

ՅԱՅԻ ԲՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ:

Բ ա զ մ ա պ ա տ կ ե լ ի ն և թ ի ւ թ ի ւ ն ։

Յէ՛ բազմապատկելին և թէ բազմապատկիչը, այս-
ինքն երկու արտադրիչները, կարող են լինել միանշան,
երկանշան, եռանշան, կամ բազմանշան:

Դազմապատկութիւնը գրաւոր կերպով կատարելիս,
փոքրագոյն թիւը սովորաբար ընդունվում է որպէս բազ-
մապատկիչ, միանշան բազմապատկիչը գրվում է բազմա-
պատկիվելու միաւորների տակ, և նորանով բազմապատկ-
վում են նախ միաւորները, յետոյ տասնաւորները և այլն:

3×3213 կամ 3213×3

Երտադրեալի վերլուծման	Դազմապատկութեան սովո-
ձեր.	ձեր.
$\begin{array}{r} \times 3 \\ \hline 9 \end{array}$	3213
30	$\begin{array}{r} \times 3 \\ \hline 9639 \end{array}$
600	
9000	
9639	

Եթէ որ և իցէ կարգի միութիւնները բազմապատկելիս գոյանում են յետագայ բարձրադոյն կարգի միութիւններ, զոքա աւելացվում են, որպէս և գումարման մէջ, յետագայ իրանց համապատասխանող արտադրեալին:

(Օրինակ. 3226×3

$$\begin{array}{r}
 3226 \\
 \times 3 \\
 \hline
 18 \\
 60 \text{ կամ} \quad 3226 \\
 600 \qquad \qquad \qquad \times 3 \\
 9000 \qquad \qquad \qquad \hline
 9678
 \end{array}$$

$6 \times 3 = 18$, $18 = 10 + 8$, ուստի միաւորները (8) գրում ենք միաւորների տակ, իսկ նոր գոյացած տասնաւորը աւելացնում ենք բազմապատկած տասնաւորներին, 2 տ.
 $\times 3 = 6$ տ., 6 տ.+1 տ.=7 տ.:

Երկանշան, եռանշան և այլն բազմապատկիչը գրվում է բազմապատկելի թուի տակ, ինչպէս որ հանման մէջ հանելին գրվում է նուազելու տակ կամ թէ գումարման մէջ գումարելիները—միմեանց տակ, այսինքն միաւորները—միաւորների տակ, տասնաւորները—տասնաւորների տակ և այլն: Ամբողջ բազմապատկելին բազմապատկիվում է նախ բազմապատկիչի միաւորներով, յետոյ տասնաւորներով, յետոյ հարիւրաւորներով և այլն ըստ կարգին. այս ստացած առանձին արտադրեալները գրվում են միմեանց տակ, որպէս գումարելի թուեր, և յետոյ բոլորը միասին գումարվում են ընդհանուր ար-

տագրեալ ստանալու համար. ուրեմն երկանշան, եռանշան և այլն բազմապատկիշներով բազմապատկելիս դորձէ ածվում և գումարումն: Այստեղ հարկաւոր է նկատել, որ տասնաւորով բազմապատկելուց ստացած արտագրեալի առաջին թուանշանը պէտք է գրել երկրորդ տեղում տասնաւորի տակ, որովհետեւ այդ առաջին թուանշանը միաւոր չէ, այլ տասնաւոր. հարիւրաւորից ստացած արտագրեալը սկսում են գրել հարիւրաւորի տակ և այլն:

Երկանշան բազմապատկիչ:

3084	×	5	6
308	4		
	×	5	6
1850	4	միաւորների	արտագրեալը
15420(0)		տասնաւորների	> >
17270	4	ընդհանուր	> >

Եռանշան բազմապատկիչ:

4807	×	354	
4	8	0	7
	3	5	4
192	2	8	միաւորների
2403	5	(0)	արտագրեալը
14421	(0)	(0)	հարիւրաւորների
17016	7	8	ընդհանուր

Փակագիծների մէջ գրած զրօները ցոյց են տալիս, թէ տասնաւորի և հարիւրաւորի արտագրեալներին ի՞նչ միութիւններ են պակաս, և թէ ի՞նչու համար տասնա-

ւորների արտադրեալի մէջ է թուանշանս է տասնաւորի
նշանակութիւն ունէ, մինչդեռ այդ արտադրեալը եթէ
առնունք իբրև առանձին թիւ, կունենայ է միաւորի
նշանակութիւն:

Եթէ բազմապատկիչ թուի որ և իցէ կարգում 0
լինի գրած, այն ժամանակ բազմապատկում են նորա
նախընթաց թուանշանով և գորանից ստացած արտա-
դրեալը սկսում են գրել այն կարգի տակ, որին պատկա-
նում է այդ թուանշանը:

$$\begin{array}{r} 4865 \times 7 \ 0 \ 6 \\ 4 \ 8 \ 6 \ 5 \\ \times 7 \ 0 \ 6 \\ \hline 291 \ 9 \ 0 \text{ միաւորների արտադրեալը} \\ 34055(0)(0) \text{ } \zeta_{\text{արիւրաւորների}} \text{ } \gg \\ \hline 34346 \ 9 \ 0 \text{ ընդհանուր } \end{array}$$

$$\begin{array}{r} 4865 \times 7 \ 0 \ 0 \ 6 \\ 4 \ 8 \ 6 \ 5 \\ 7 \ 0 \ 0 \ 6 \\ \hline 29 \ 1 \ 9 \ 0 \text{ միաւորների արտադրեալը} \\ 34055(0)(0)(0) \text{ } \zeta_{\text{ազարաւորների}} \text{ } \gg \\ \hline 34084 \ 1 \ 9 \ 0 \text{ ընդհանուր } \end{array}$$

Եթէ երկանշան, եռանշան կամ բազմանշան բազ-
մապատկիչը զրօներով է վերջանում, այսինքն եթէ
վերջանում է լոկ տասնաւորներով, $\zeta_{\text{արիւրաւորներով}}$,
 $\zeta_{\text{ազարաւորներով}}$ և այլն, բազմապատկելիս առ ժամա-
նակ բաց են թողնում զրօները, իսկ յետագայ թուա-
նշանները գրում են բազմապատկելու տակ, առաջին թուա-
նշանը միաւորների, երկրորդը տասնաւորների տակ և

այլն, յետոյ այս մնացած թուանշաններով բազմապատկութիւնը կատարում են սովորական կերպով, բազմապատկութիւնը աւարտելուց կամ թէ առանձին արտադրեալները գումարելուց և այդպէս ընդհանուր արտադրեալ ստանալուց յետոյ, բաց թողած զրօները գրում են ընդհանուր արտադրեալի աջ կողմումը, որպէս զի արտադրեալը շատացնեն այնքան անգամ, որքան բազմապատկիչը պակասացած էր, զրօներիցը զրկվելով:

Վենք թէ տուած է 25×40 , եթէ բազմապատկինք $25 \cdot r$ 4-ով կստանանք 100, թէպէտ մեզ տուած էր $25 \cdot r$ բազմապատկել $40 \cdot o$, բայց մենք բազմապատկեցինք 4 միաւորով, և որովհետեւ 4 միաւորը տասը անգամ փոքր է 4 տասնաւորից ($40 \cdot h$), ուրեմն մեր ստացած արտադրեալը (100) նմանապէս 10 անգամ փոքր է իսկական արտադրեալիցը, ուստի իսկական արտադրեալը ստանալու համար հարկաւոր է մեր ստացած արտադրեալը տասը անգամ շատացնել, այսինքն աջ կողմումը զրո դրել:

(Օրինակներ.

25×40	4057×3600	725683×504000
25	4057	725683
40	3600	504000
1000	2434200	2902732000
	12171	3628415
	14605200.	365744232000.

Եթէ բազմապատկելին և բազմապատկիչը զրօներով են վերջանում, պէտք է բաց թողնել զրօները և բազմապատկել միւս թուանշանները, ապա ընդհանուր ար-

տագրեալի աջ կողմումը աւելացնել այնքան զրօ, որքան զրօներով վերջանում էին բազմապատկելին և բազմապատկելիչ:

$$\begin{array}{r} 11^{\text{th}} \text{ January } 1971 \\ \text{to } 1^{\text{st}} \text{ January } 1972 \\ \hline \text{Amounts due } \\ \hphantom{\text{Amounts due }} \quad \times 30 \\ \hphantom{\text{Amounts due }} \quad 40 \\ \hline \text{Total amount } 1200 \end{array}$$

Ըերանացի բազմապատկելով 4-ը 3-ով և 12-ի վերայ 0 աւելացնելով մենք այդ թիւը սասնապատկում ենք, այսինքն ստանում ենք 120 ($12 \times 10 = 10 \times 10 + 2 \times 10 = 120$). 120-ի վերայ 0 աւելացնելով նոյնպէս սասնապատկում ենք այդ թիւը և ստանում ենք 1200 ($120 \times 10 = 100 \times 10 + 20 \times 10$, $100 \times 10 = 1000$, $20 \times 10 = 200$, $1000 + 200 = 1200$):

[View profile](#)

336 ստանալու համար 112-ը քանի՛ անդամ՝ պէտք է շատացնել. և քանի՛ եղանակով:

$$\begin{array}{r}
 122 \\
 122 \\
 122 \\
 \hline
 366
 \end{array}
 \quad \times 3 =
 \begin{array}{r}
 122 \\
 \times 3 \\
 \hline
 366
 \end{array}$$

Այս օրինակի մէջ քանի թիւ կայ և ի՞նչպէս են կոչվում նորա:

Генералът също също:

(Վայովքը արտադրեալնէ, իսկ բազմապատկելին—մասը):

Ըաղմապատկելին արտադրեալի որ մասն լինելը ինչից է երևում:

Վանի անգամ կարելի է հանել այդ մասը ամբողջիցը, այսինքն բազմապատկելին արտադրեալիցը:

Այդ մասը եթէ մի անգամ հանենք ամբողջիցը, ամբողջը ո՞րքան կըփռքրանայ:

Այդ մասը քանի անգամ պէտք է հանել ամբողջիցը, որ նորանից էլ ոչինչ չմնայ:

Ըաղմապատկելին քանի անգամ է պարունակվում արտադրեալին մէջ, և բազմապատկիչը արտադրեալի ո՞ր մասն է:

Արտադրեալը քանի անգամ շատ է իւրաքանչիւր արտադրիչներից:

Ըաղմապատկելին և բազմապատկիչը միասին ի՞նչպէս են կոչվում, և ի՞նչո՞ւ համար:

Ըաղմապատկիչը քանի թուանշաններ կարող է ունենալ:

Ա երոյիշեալ օրինակներին նայելով բազմապատկիչը ի՞նչպէս պէտք է գրել բազմապատկելու տակ:

Եթէ բազմապատկիչը վերջանում է զրօներով, ի՞նչպէս է գրվում դա բազմապատկելու տակ:

Եթէ բազմապատկելին և բազմապատկիչը զրօներով են վերջանում, բազմապատկութիւնը ի՞նչպէս պէտք է կատարել:

Որ և իցէ թիւ ի՞նչպէս պէտք է շատացնել կամ քշացնել 10, 100, 1000 և այլն անգամ:

Եթէ բազմապատկիչը բազմանշան լինի, ո՞րքան մասնաւոր արտադրեալներ կարող են լինել:

Ըացի մասնաւոր արտադրեալներից այլ բնչէ արտադրեալ կայ:

Խնչպէս և ինչից է բաղկանում ընդհանուր արտադրեալը:

Խնչին է հաւասար 33×20 , 330×200 , 3300×2000 , 550×10 , 5500×1100 և այլն:

ՀԻՆԴԵՐՈՒԴԻ ԸՍՏԻՃԱԿՆ:

Բ ա ժ ա ն ո ւ ժ ն:

«Ետինե առաջ պէտք է ասել, որ թուերը բաղմակողմանի քննելու համար, մենք որոշապէս զանալանում ենք «պարունակութիւն» և «բաժանումն» բառերի իմաստը:

«Երցա զանալանութիւնը այս է, «բաժանմամբ» պահանջվում է գտնել մի թիւ, որ բաժանելու այն մասը լինի, որ նոր ցոյց է տալիս բաժանաբարը, բաժանաբարը առ հասարակ բաժանելու աջ կողմին է գրվում. ուստի $12 : 3$ (12 բաժանած 3 -ի) ցոյց են տալիս թէ $12\cdot\text{ի}$ երրորդ մասը \circ թիւն է. $12\cdot\text{ի}$ մէջ \circ թիւն է երեք անգամ՝ պարունակվում. 12 ստանալու համար \circ թիւը պէտք է երեք անգամ՝ կրկնել: Պատասխան 4 . որովհետեւ $12 = 3 \times 4$:

Խսէ «պարունակութիւնը» ցոյց է տալիս թէ բաժանելին ստանալու համար քանի՞ անգամ՝ պէտք է բաժանաբարը կրկնել ուստի $12 : 3$ ցոյց է տալիս, թէ $3\cdot\text{ը}$ քանի՞ անգամ է պարունակվում տասներկուսի մէջ. $3\cdot\text{ը}$ քանի՞ անգամ պէտք է կրկնել, որ ստանակ տասներկու. $3\cdot\text{ը}$ քանի՞ անգամ կարելի է հանել տասներկուսից: Պատասխան 4 , որովհետեւ $12 = 4 \times 3$: Աւելին

պարունակութիւնը է բաժանման անհրաժեշտ պայմանը.
քանի անդամ որ փոքրագոյն թիւը պարունակվում է մեծա-
գոյն թուի մէջ, այնքան մասն ևս բաժանվում է մեծա-
գոյն թիւը. Յ-ը 12-ի մէջ 4 անդամ է պարունակվում.
ուստի 12-ը բաժանվում է 4-ի, 4-ը 12-ի մէջ պարունակ-
վում է 3 անդամ, ուստի 12-ը բաժանվում է 3-ի:

Այժմ առնունք բաժանման մի քանի օրինակներ,
որ կարելի է բերանացի և գրաւոր կերպով լուծել
առանց մեացորդի:

Բաժանելին միանշան, բաժանարարը նմանապէս
միանշան, քանորդը անփոփոխ:

3 միաւորը 6 միաւորի մէջ պարունակ. 2 անդամ
(6 : 3=2):

3 տասնաւորը. 6 տաս. մէջ պարունակ. 2 անդամ
(60 : 30=2):

Բաժանելին երկանշան:

3 միաւորը 18 միաւորի մէջ պարունակվում է 6 ան-
դամ (18 : 3=6):

3 տասնաւորը 18 տասնաւորի մէջ-6 (180 : 30=6):

3 հարիւրաւորը 18 հարիւրաւորի մէջ-6 (1800 : 300=6):

Բաժանելին եռանշան:

3 միաւորը 186 միաւորի մէջ պարունակվում է 62 ան-
դամ (186 : 3=62):

3 տասնաւորը 186 տասնաւորի մէջ պարունակվում է
62 անդամ (1860 : 30=62):

3 հարիւրաւորը 186 հարիւրաւորի մէջ պարունակ-
վում է 62 անդամ (18600 : 300=62):

Քանորդը փոփոխական:

6 միաւորի երրորդ մասը = 2 միաւորին (6 : 3 = 2):

6 տասնաւորի երրորդ մասը = 2 տասնաւորին (60 : 3 = 20):

18 միաւորի երրորդ մասը = 6 միաւորին (18 : 3 = 6):

$\frac{1}{3} \times 186$ միաւորի = 62 միաւորին (186 : 3 = 62):

$\frac{1}{3} \times 186$ տասնաւորի = 62 տասնաւորին (1860 : 3 = 620):

Դաժանելին և բաժանաբարը երկանշան, քանորդը
անփոփոխ:

18 միաւորը 54 միաւորի մէջ պարունակվում է 3 ան-
գամ (54 : 18 = 3):

18 տասնաւորը 54 տասն, մէջ 3 անգամ (540 : 180 = 3):

Դաժանելին եռանշան:

18 միաւորը 108 միաւորի մէջ պարունակվում է 6 ան-
գամ (108 : 18 = 6):

18 տասնաւորը 108 տասն, մէջ 6 (1080 : 180 = 6):

Քանորդը աճող:

$\frac{1}{18} \times 54$ միաւորի ($54 \cdot \frac{1}{18} \cdot 18 \cdot \eta$ մասը) = 3 միաւորին (54 : 18 = 3):

$\frac{1}{18} \times 54$ տասնաւորի = 3 տասնաւորին (540 : 18 = 30):

$\frac{1}{18} \times 108$ միաւորի = 6 միաւորին (108 : 18 = 6):

$\frac{1}{18} \times 108$ տասնաւորի = 6 տասնաւորին (1080 : 18 = 60):

Դաժանելին և բաժանաբարը եռանշան, քա-
նորդը անփոփոխ:

114 միաւորը 342 միաւորի մէջ պարունակվում է 3
անգամ (342 : 114 = 3):

114 տասնաւորը 342 տասնաւորի մէջ պարունակվում
է 3 անգամ ($3420 : 1140 = 3$):

Դաժանելին քառանշան:

506 միաւորը 1012 միաւորի մէջ պարունակվում է 2
անգամ ($1012 : 506 = 2$):

506 տասնաւորը 1012 տասնաւորի մէջ պարունակվում
է 2 անգամ ($10120 : 5060 = 2$):

Վանորդը աճող:

$\frac{1}{114} \times 342$ միաւորի = 3 միաւորին ($342 : 114 = 3$):

$\frac{1}{114} \times 342$ տասնաւորի = 3 տասնաւորին ($3420 : 114 = 30$):

$\frac{1}{506} \times 342$ հարիւրաւորի = 3 հարիւրաւորին ($34200 : 114 = 300$):

$\frac{1}{506} \times 1012$ միաւորի = 2 միաւորին ($1012 : 506 = 2$):

$\frac{1}{506} \times 1012$ տասնաւորի = 2 տասնաւորին ($10120 : 506 = 20$):

Բաժանելին և բաժանարարը միանշան, քա-
նորդը անփոփոխ:

3 միաւորը 7 միաւորի մէջ պարունակվում է 2 ան-
գամ, 1 միացորդով [$7 : 3 = 2$ (1)]:

3 տասնաւորը 7 տասնաւորի մէջ պարունակի, 2 ան-
գամ, 1 տասն, միացորդով [$70 : 30 = 2$ (10)]:

3 հարիւրը 7 հարիւրի մէջ պարունակի, 2 անգամ,
1 հար, միացորդով [$700 : 300 = 2$ (100)]:

Բառ ժանելին երկանշան:

Յ միաւորը 25 միաւորի մէջ պարունակ. 8 անգամ 1
մնացորդով [25 : 3=8 (1)],

Յ տաս. 25 տասնաւորի մէջ պարունակ. 8 անգամ 1
տաս. մնացորդով [250 : 30=8 (10)] այս:

Արագ թուարկելու օրինակներ:

$\frac{1}{16} \times 48\text{-իքանի}$ անգամ է պարունակվում 120-ի մէջ:

$\frac{1}{503} \times 1018\text{-ի}$, բաժանած 2-ով, 100-ի ո՞ր մասն է:

$\frac{1}{4} \times 9600\text{-ի}$, բաժանած 2-ով քանի անգամ է պա-
րունակվում՝ 96 հարիւրի մէջ:

Օրինակներ գրաւոր բաժանման առանց մնացորդի:

Բաժանարարարը միանշան, բաժանելին առանց զրօների:

$$15936 : 3 = 15000 + 900 + 30 + 6 : 3$$

$$15000 : 3 = 5000$$

$$900 : 3 = 300$$

$$30 : 3 = 10$$

$$6 : 3 = 2$$

$$\overline{5312}$$

Համառօտիւ.

$$3 : 15936 = 5000$$

$$\overline{15000}$$

$$936 = 300$$

$$\overline{900}$$

$$36 = 10$$

$$\overline{30}$$

$$6 = 2$$

$$\overline{6}$$

$$\Rightarrow \overline{5312}$$

աւելի Համառօտ.

$$3 : 15936 = 5 \text{ հազ.}$$

$$\overline{15}$$

$$9 \text{ հր.} = 3 \text{ հր.}$$

$$9 \text{ հր.}$$

$$3 \text{ ա.} = 1 \text{ տասն.}$$

$$3 \text{ ա.}$$

$$6 \text{ ժ.} = 2 \text{ միաւ.}$$

$$6 \text{ ժ.}$$

$$\Rightarrow \overline{5312}$$

Ամենակարճ և սովորական ձևը.

$$\begin{array}{r} 1) \quad 15936 \quad | \quad 3 \\ \hline 15 \quad | \quad 5312 \\ \hline 9 \\ \hline 9 \\ \hline 3 \\ \hline 3 \\ \hline 6 \\ \hline 6 \\ \hline \end{array} \qquad \begin{array}{r} 2) \quad 49686 : 6 \\ \hline 48 \quad | \quad 8281 \\ \hline 16 \\ \hline 12 \\ \hline 48 \\ \hline 48 \\ \hline 6 \\ \hline 6 \\ \hline \end{array}$$

Այս օրինակներից երեսում, որ

1) Խաժանման գործողութիւնը բազմապատկութեան դարձողութեան բոլորովին հակառակն է. բազմապատկութիւնը սկսում ենք ստորին կարգի միութիւններից և հետզհետէ բազմապատկում ենք բարձր կարգի միութիւնները, որ փոքրագոյն թուից ստանանք մեծագոյն թիւ, այսինքն մասերից—ամբողջ, իսկ բաժանումն. ընդ հակառակն, սկսում ենք բարձրագոյն կարգի միութիւններից և հետզհետէ բաժանում ենք ստորին կարգի միութիւնները: Այսպէս տուած թուում (15936) մենք նախ իմացանք, թէ Յ. քանի անգամ է պարունակվում 15000-ի մէջ. յետոյ քանի անգամ է պարունակվում 900-ի մէջ, 30-ի և 6-ի մէջ, ու մի և նոյն ժամանակ ստացանք «քանորդը», այսինքն ամբողջ տուած թուի երրորդ մասը, որը պէտք էր և գտնեինք, միւս օրինակումը մի և նոյն կարգով գտանք ամբողջ թուի (49686) վեցերրորդ մասը կամ թէ ըստ ցուցման բաժանարարի (6) ստացանք քանորդը = 8281:

Առողելու համար, թէ 8281 իսկապէս 49686 թուի

^{1/6} մասն է, հարկաւոր է քանորդը (8281) բազմապատկել բաժանաբարով (6):

2) Երբ գտնում ենք, թէ բաժանաբարը քանի անգամ է պարունակվում բաժանելի թուի որ և իցէ կարգի միութիւնների մէջ, այն ժամանակ այդ գտած թուով բազմապատկում ենք բաժանաբարը, ստացած արտադրեալը դրում ենք բաժանելի թուի այն միութիւնների տակ, որոնց համար գտանք թէ նոցա մէջ քանի անգամ է պարունակվում բաժանաբարը. այդ արտադրեալի տակ քաշում ենք գիծ, և եթէ արտադրեալը հաւասար է բաժանելի թուի այն միութիւններին, որոնց տակ գրած է նա, այն ժամանակ գծի տակ գրում ենք բաժանելի թուի յետագայ կարգի միութիւնները, իւրաքանչյւրը անպատճառ իւրեան տեղը. իսկ եթէ արտադրեալը փոքր լինի այն միութիւններից, որոնց տակ գրուած է, ապա հանում ենք առաջինը վերջիններից և ստացած մնացորդը, գրելով գծի տակ, միացնում ենք յետագայ միութիւնների հետ: Այսպէս, իմանալով, որ բաժանելու 49 հաղարի մէջ 6-ը պարունակվում է 8 հզը, անգամ, մենք 8-ը բազմապատկեցինք 6-ով, արտադրեալը (48) գրեցինք 49-ի տակ. յետոյ այդ արտադրեալի տակ գիծ քաշեցինք, 48 հզը, հանեցինք 49 հաղարից և մնացորդ ստացանք 1 հաղար, որ և գրեցինք գծի տակ. յետոյ դորա հետ միացրինք յետագայ 6 միութիւնը, այսինքն 600, որով կազմվեցաւ 1600 կամ թէ 16 հարիւր ըստ տեղւոյն, որ այս թուանշանները բռնած են բաժանելու թուի վերաբերութեամբ. ապա իմանալով, որ 6-ը 1600-ի կամ թէ 16 հարիւրի մէջ պարունակվում է 2 հզը. անգամ, 6-ը բազմապատկեցինք 2-ով և

արտադրեալ 12-ը (1200) գրեցինք 16-ի (1600) տակ.
12-ը հանելով 16-ից ստացանք 4 (400), միացրինք
նորա հետ յետագայ 8 միութիւնը (80). իմանալով
որ 6-ը 48-ի մէջ պարունակվում է 8 անգամ (48 : 6 =
8), 8-ը բազմապատկեցինք 6-ով, և ստացանք այնպի-
սի արտադրեալ, որ = այն միաւորներին, որոնց տակ դա
պէտք է գրվի (48) և որովհետեւ 48—48=0, ուստի
ցած բերինք և գծի տակ գրեցինք բաժանելու յետա-
գայ կարգի 6 միութիւնը, 6 միաւորը 6 միաւորի մէջ
պարունակվում է 1 անգամ, ուստի 6-ը 1-ով բազմապատ-
կեցինք և ստացանք 6 միաւոր, ստացած արտադրեալը
գրեցինք բաժանելու 6 միաւորի տակ և մէկը միւսից
հանելով ոչինչ չմնաց: Որովհետեւ ոչինչ մնացորդ չմնաց,
ուրեմն 49686-ի մէջ 6-ը պարունակվում է ուղիղ 8281
անգամ, կամ թէ ամբողջ 49686 կարելի է այնպիսի
6 հաւասար մասերի բաժանել, որոնցից իւրաքանչիւրը
կլինի 8281. ուրեմն եթէ 6 մարդ 49686 մանէթ գտնին,
միմեանց մէջ հաւասար բաժանելով, իւրաքանչիւրը կստա-
նայ 8281 մանէթ:

3) Կախընթաց օրինակներից հետեւում է, որ բաժանումն
կատարվում է բազմապատկութեան, հանման, նաև գու-
մարման միջնորդութեամբ, որովհետեւ բարձրագոյն կար-
գի միութիւնների մնացորդը միացնում ենք բաժանելի
թուի յետագայ կարգի միութիւնների հետ, որոնց գու-
մարը կլինի մասնաւոր բաժանելին:

4) Խնչպէս բազմապատկութեան մէջ մասնաւոր ար-
տադրեալներից կազմվաւմ է ընդհանուր արտադրեալ,
նոյնպէս և բաժանման մէջ մասնաւոր քանորդներից կազ-

մվում է ընդհանուր քանորդ, որովհետեւ 8281=8000
+200+80+1:

Ըստանումը բարձր կարգի միութիւններից սկսելով,
մենք պէտք է վերառնունք բաժանելի թուից այնքան
թուանշաններ, որ նոքա համապատասխանեն բաժանարա-
րին, այնպէս որ բաժանարարը նոցա մլ.ջ պարունակվի
կամ առանց մնացորդի կամ այնպիսի մնացորդով, որ
փոքր լինի բաժանարարից: Պէտք է առել, որ իւրա-
քանչիւր մասնաւոր քանորդը համապատասխանում է բա-
ժանելի թուի այն մասին, որը մենք վերցրինք բաժա-
նելու համար, զորօրինակ տուած ամրող (15936) բա-
ժանելի թուիցը նախ վեր առանք բաժանելու 15, այսինքն
15 հզր., ուստի քանորդը ևս կլինի հաղարաւոր կար-
գից, այսինքն օ «հաղար»: բայց եթէ նախ վերառ-
նելինք 1-ը, այսինքն 1 տաս.-հաղարաւորը, քանոր-
դում տաս-հաղարաւոր չէինք ստանալու, այլ միայն հա-
ղարաւոր, ուստի վերցրինք բաժանելու բոլոր հաղա-
րաւորները (15) և այնպէս բաժանեցինք:

Վայս բոլոր օրինակներից սովորում ենք բաժանման
էութիւնը, այսինքն թէ ի՞նչպէս պէտք է կատարել բա-
ժանումը և ի՞նչ է գորա նպատակը:

Վայս պէտք է քննենք մի քանի մասնաւոր գեղքերը:

Խաժանելին զրօներով:

առաջին ձև.

1) 650048 : 8		2) 664800 : 8	
6500488		6648008	
640000	80000	640000	80000
10048	1000	24800	3000
8000		24000	
2048	200	800	100
1600		800	83100
448	50	» » »	
400			
48	6		
48	<u>81256</u>		
» »			

Երկրորդ ձև.

6500488		6648008	
64	<u>81256</u>	64	<u>83100</u>
10		24	
8		24	
20		8	
16		8	
44		0	
40			
48			
48			
» »			

Եռաջին օրինակում բաժանելու մէջ տեղը եղած զրօները հաղարաւորի և հարիւրաւորի կարգերը բռնելով բոլորապես շեն գժուարացնում գործողութիւնը,

իսկերկրորդ օրինակում նոքա, թուի վերջը, այսինքն տասնաւորների և միաւորների տեղու բանելով, կարող են խնդիր ծագեցնել, թէ ինչ պէտք է արած նոցա հետ: Այդ խնդիրը ակներեւ լուծվում է վերել ցոյց տուած զործողութեան առաջին ձևովը, ուր քանորդը վերլուծած է և ցոյց է տուած, որ $1\cdot\text{ը}=100\cdot\text{ին}$, ուրեմն պարզ երեսում է, որ մնացած զրօները պէտք է միացնել քանորդի հետ, ապա թէ ոչ մենք կ'բաժանեինք ոչ թէ 664.800, այլ միայն 6648, և ստացած քանորդը կլինի ոչ թէ 664800-ի այլ 6648-ի ութերորդ մասը մեր ասածը ստուգելու համար հարկաւոր է քանորդը (831) բազմապատկել բաժանարարով (8), որից արտադրեալ կստանանք 6648, իսկ եթէ քանորդի հետ երկու զոր միացնենք և յետոյ բազմապատկենք բաժանարարով (8), այն ժամանակ կստանանք տուած բաժանելի թիւը (664.800) լիովին:

Բաժանելին և բաժանարարութ զքօներով:

Եթէ զրօներով վերջացող թիւը բաժանելու լինի 10-ի, 100-ի, 1000-ի և այլն, այն ժամանակ հարկաւոր է բաժանելի թուից ջնջել այնքան զքօ, որքան որ կայ բաժանարարի մէջ, այսինքն 10-ի բաժանելու ժամանակ հարկաւոր է մի զքօ ջնջել, 100-ի բաժանելու ժամանակ—երեք զքօ, 1000-ի բաժանելու ժամանակ—երեք զքօ և այլն, այն ժամանակ բաժանելի թուի մնացած թուանշանները կլինին որոնելի քանորդը, որովհետեւ բաժանարարի զրօները ևս ջնջելով, այսինքն բաժանարարը ևս փոքրացնելով այնքան անգամ, ինչ քան անգամ փոքրացրինք արդեն բաժանելին, նա կդառ-

Նայ միայն 1, որը ամեն ամբողջ թուի մէջ առանց մնացորդի պարունակվում է այնքան անգամ, ինչքան մէկերկան այն ամբողջում:

(Օրինակներ.

830 : 10 = 83.	8300 : 100 = 83.	83000 : 1000 = 83.
830 10	8300 100	83000 1000
80 83	800 83	8000 83
30	300	3000
30	300	3000
» »	» » »	» » » »

Եթէ թիւը զրօներով չէ վերջանում և տուած է 10-ի բաժանելու, քանորդը կստանանք միշտ մի և նոյն կարգով մի և նոյն թուանշանները, որոնցից բաղկացած է բաժանելին, բացի միաւորներիցը, որովհետեւ տասնաւորը միաւորի մէջ չէ պարունակվում. ուստի միաւորները միշտ մնացորդ են լինում: Ո՞ի և նոյն պատճառով 100-ի բաժանելու ժամանակ մնացորդ լինում են տասնաւոր և միաւոր, 1000-ի բաժանելու ժամանակ մնացորդ լինում են հարիւրաւոր, տասնաւոր և միաւոր:

(Օրինակներ.

1) 379 10	2) 6891 100	3) 1375143 1000
30 37	600 68	1000 1375
79	891	3751
70	800	3000
9	91	7514
		7000
		5143
		5000
		143

Երկանշան բաժանարար.

Ո՞ի թիւ երկանշան բաժանարարի բաժանելու համար, յառաջագոյն հարկաւոր է զիտենալ, թէ նախ ենթանդրում ենք որոնելի մասնաւոր բանորդը, յետոյ այդ ենթադրած թուով բազմապատկում ենք բաժանարարի առաջին թուանշանը (միաւորը) որպէս և սովորական բազմապատկութեան մէջ, գոյացած բարձր կարգի միութիւնը աւելացնում ենք այն արտադրեալին, որ կյառաջանայ բաժանարարի երկրորդ թուանշանը մի և նոյն թուով բազմապատկելուց, ուրեմն անպատճառ հարկաւոր է, որ ենթադրած քանորդով բաժանարարի երկու թուանշանների բազմապատկվելուց գոյացած ընդհանուր արտադրեալը կամ հաւասար լինի բաժանելի թուից վեր առած մասին, կամ թէ կարելի լինի նորանից հանել, այնպէս որ մեացորդը բաժանարարից փոքր լինի.

Գիցուք թէ տուած է 1365-ը 35-ի բաժանելու: Պարզ է որ 35-ը 13-ի մէջ չէ պարունակվում, ուստի 13-ի (13 հար.) հետ միացնում ենք յետագայ թուանշանը, որով 13-ը բազմանում է ըստ կանոնի 10 անդամ, ուրեմն մենք ունենք 136 միաւոր (13 տաս. + 6 միաւ.) և ասում ենք 35-ը քանի անդամ է պարունակվում 136-ի մէջ: Թէպէտ 130-ի մէջ 30-ը պարունակվում է 4 անդամ և 1 տաս, մեացորդով, որովհետեւ 30 \times 4 = 120 = 12 տաս, բայց որովհետեւ 30-ի մօտ կայ և 5 միաւոր, որոնք 4-ով բազմապատկելուց գառնում են 2 տաս., իսկ այդ 2 տաս, յայտնի կանոնին համեմատ պէտք է աւելացնել 12 տասնաւորին. իսկ 12 տաս.

+2 տաս. = 14 տաս. = 140. ուրեմն 35-ը 136-ի մէջ
4 անգամ չէ կարող պարունակվիլ այլ 3 անգամ է
պարունակվում, ինչպէս օրինակից այդ կերպի:

$$\begin{array}{r} 1365 \mid 35 \\ 105 \quad \mid 39 \\ \hline 315 \\ 315 \\ \hline 3 \end{array}$$

Եթէ բաժանարարը լինի եռանշան կամ բազմանշան:
մի և նոյն կանոնով պէտք է կատարել գործողութիւնը:

Այժմ մեր ուշադրութիւնը գարձնենք յետագայ պա-
րագայի վերայ: Դիցուք թէ տուած է:

38,054,530 բաժանելու 3,779-ի.

3779-ը 38 միլիոնի մէջ պարունակվում է 10 հազար
անգամ, գործողութիւնը համառօտելու համար քանոր-
դում գրում ենք 1:

$$\begin{array}{r} 38054530 \mid 3779 \\ \hline 1 \end{array}$$

Ատացած քանորդի (1) և բաժանարարի (3779) աբու-
դրեալը գրելով բաժանելու թուի տակ

$$\begin{array}{r} 38054530 \mid 3779 \\ 3779 \quad \mid 1 \\ \hline 264 \end{array}$$

միացորդում՝ կստանանք 26. այդ միացորդի հետ միացը-նելով՝ յետագայ թուանշանը շատացնում ենք նորան 10 անգամ, բայց 3779-ը այնու ամենայնիւ 2645-ին մէջ չէ պարունակվում, ուստի հարկաւոր է ցած բերել դարձեալ մի թուանշան (5) և այս կերպով մասնաւոր բաժանելի թիւը կրկին շատացնելով տասը անգամ ստանում ենք 2645, ուրեմն քանորդը ևս պէտք է շատացնել տասը անգամ, այսինքն պէտք է քանորդում գտնուած մէկի մօտ գրել 0.

38054530 3779

3779 10

2645

Առկային 3779-ը նոյնպէս չէ պարունակվում 2645-ին մէջ, ուստի պէտք է յետագայ թուանշանը ևս ցած բերել, բայց որովհետեւ մասնաւոր բաժանելին շատացըինք նոյնպէս տասն անգամ, ուստի քանորդը ևս պէտք է շատացնել տասն անգամ, այսինքն քանորդում պէտք է տւելացնել 0:

38054530 3779

3779 100

26453

Այժմ պէտք է իմանալ թէ 3779 քանի անգամ է պարունակվում 26453-ին մէջ, 26-ի մէջ 3-ը պարունակվում է 7 անգամ + 5 միաւոր, որովհետեւ $3 \times 7 = 21$, իսկ $26 = 21 + 5$. ուրեմն 3 հազարն 26 հազարի մէջ պարունակվում է նոյնպէս 7 անգամ + 5 հազար, այս թիւը ցոյց է տալիս, որ ամբողջ բաժանարարը (3779) ևս այս բա-

ժանելի թուի (26453) մէջ պարունակվում է 7 անգամ,
միայն եթէ բաժանարարի երրորդ թուանշանից ստա-
ցած արտադրեալը, բարձր կարգի միութիւնները, որ պէտք
է աւելացնենք բաժանարարի վերջին թուանշանի ար-
բագրեալին, չափաղանց չշատացնեն այդ արտադրեալը
26-ի վերաբերութեամբ, ամբողջ բաժանարարը 7-ով
բազմապատկերով ստանում ենք այնպիսի արտագրեալ, որ
հաւասար է բաժանելի թուին, ուստի յայտնի երեսում է
որ քանորդում մենք կարող ենք ենթադրել 7-ը, այս-
ինքն թէ 3779-ը 7 անգամ է պարունակվում 26453-ին
մէջ (կամ թէ $264530 = 3779 \times 70$).

$$\begin{array}{r}
 38054530\ 3779 \\
 2779 \quad | 10070 \\
 \hline
 26453 \\
 26453 \\
 \hline
 0
 \end{array}$$

Արովչեան մնացորդ շստացանք, ուստի բաժանելի
թուում մնացած զրօն պէտք է քանորդի հետ միացնել.
ապա թէ ոչ, ստացած քանորդը առանց զրօյի կլինի
միայն 3805453-ի քանորդ, և ոչ թէ ամբողջ բաժանելի
թուինը: Այս արդէն վերեւում յիշած ենք, բայց զրօ-
ներով վերջացող թուերի վերաբերութեամբ պէտք է
ուշադրութիւն դարձնել և յետագայ պարագային:

Երբ զրօներով վերջացած մի բազմանշան թիւ բա-
ժանում ենք միւս նոյնպէս բազմանշան և զրօներով
վերջացած թուի, այն ժամանակ նոցա կարելի է կրծա-
տել, այսինքն բաժանելի և բաժանարար թուերից չա-

ւասարաթիւ զրօներ ջնջել և այնուհետեւ բաժանել յայտնի կանոնով։ Ի՞սկ պէս կրծատել կարելի է այն պատճառով, որ, ինչպէս վերևը ցոյց է տուած, քանորդը դորանից փոփոխութիւն չէ կրում. որովհետեւ քանի անգամ քանորդը փոքրանում է թուի զրօները ջնջելուց, այնքան անգամ ևս նա մեծանում է բաժանարարի զրօները ջնջելուց, ուրեմն մեծութեամբ մնում է անփոփոխ։ (Օրինակ. եթէ առանց կրծատելու բաժանենք 180,000-ը

$$\begin{array}{r} 180000 | 9000 \\ 18000 | \quad 20 \\ \hline 0 \end{array}$$

քանորդ կստանանք 20:

Խակ եթէ կրծատելուց յետոյ բաժանենք

$$\begin{array}{r} 180 | 9 \\ 18 | \quad 20 \\ \hline > 0 \end{array}$$

քանորդ կստանանք նոյնպէս 20:

Բաժանումը միշտ առանց մնացորդի չէ կատարվում, ուրեմն մնացորդը ի՞նչ պէտք է անել։

Եթէ բաժանենք

$$\begin{array}{r} 596 \cdot \underline{\text{լ}} \quad 7 \cdot \underline{\text{ի}}, \quad \text{կամ } \text{թէ } 7350 \cdot \underline{\text{լ}} \quad 9 \cdot \underline{\text{ի}}, \\ 596 | 7 \qquad \qquad \qquad 7350 | 9 \\ 56 | \overline{85^1}_7 \qquad \qquad \qquad 72 | \overline{816^6}_9 \\ \hline 36 \qquad \qquad \qquad 15 \\ 35 \qquad \qquad \qquad 9 \\ \hline 1 \qquad \qquad \qquad 60 \\ . \qquad \qquad \qquad 54 \\ \hline \end{array}$$

մնացորդը, ինչպէս ցոյց է տուած, գրվում է քանորդում կոտորակի ձևով. բաժանումը ստուգելիս մնացորդը պէտք է աւելացնել բաժանաբարի և քանորդի բաղմապատկութիւնից ստացած արտադրեալին, ապա թէ ոչ այդ արտադրեալը բաժանելի թուին հաւասար չի լինիլ իսկ բաժանումը այն ժամանակ ստուգված կհամարվի, երբ յիշեալ արտադրեալը հաւասար կլինի բաժանելուն:

«Օ»անօթութիւն: Այն թիւը, որի առանց մնացորդի բաժանվում է մի որ և իցէ տուած թիւ, կոչվում է նորա «բաժանաբարը», իսկ տուած թիւը կոչվում է «բաղմապատիկը» այն թուի, որի բաժանվում է ինքը ամբողջապէս, առանց մնացորդի. օրինակ 24-ը բաժանվում է ամբողջապէս 2-ի, 3-ի, 4-ի և այլն, ուստի 24-ի բաժանաբարը են 2-ը, 3-ը, 4-ը, իսկ 24-ը 2-ի, 3-ի, 4-ի և այլն թուերի բաղմապատիկն է:

Եթէ որ և իցէ թիւ, բացի 1-ից և իրանից, ուրիշ բաժանաբար չունի, կոչվում է «սկզբնական» կամ «պարզ» թիւ. օրինակ. 3, 5, 7, 11 և այլն:

Այն թիւը, որը բաժանվում է առանց մնացորդի բաժանվում են 2-ի, կոչվում են զզյդ թուեր. օրինակ. 2, 4, 6, 8 և այլն, միւս թուերը ինչպէս 3, 5, 7 և այլն կոչվում են անզոյդ:

Այն թիւը, որը բաժանում է առանց մնացորդի երկու, երեք և այլն թուեր, կոչվում է «ընդհանուր բաժանաբար», ինչպէս 36-ի և 48-ի ընդհանուր բաժանաբարները կլինեն 1, 2, 3, 4, 12:

Բաղմապատկութեան և բաժանման մէջ ի՞նչ զանազանութիւն կայ:

Բազմապատկութեան համար տուած է լինում երկու թիւ, երկու արտադրիչներ, «բազմապատկելին» և «բազմապատկիչը», որոնցով պէտք է գտնվի անյայտ ամբողջ թիւը, «արտադրեալը». բաժանման համար տուած է լինում նոյնպէս երկու թիւ, «բաժանելին», այսինքն այն ամբողջ թիւը, որ պէտք է բաժանվի, և բաժանարարը, այսինքն այն թիւը, որի պէտք է բաժանել այդ ամբողջը, որ գտնվի «քանորդը», այսինքն ամբողջի անյայտ մասը: Ուրեմն բազմապատկութեան մէջ որոնելին է ամբողջը, այսինքն «արտադրեալը», իսկ բաժանման մէջ որոնելին է մասն, այսինքն «քանորդը». բազմապատկութեան մէջ բազմապատկիչը ցոյց է տալիս թէ մի նշանակեալ արտադրեալ ստանալու համար տուած թիւը որքան անգամ պէտք է կրկնել, իսկ բաժանման մէջ բաժանարարը ցոյց է տալիս թէ բաժանելի թուի մի նշանակեալ մասը ստանալու համար քանի մասն պէտք է բաժանել բաժանելի թիւը. բազմապատկութեան մէջ բազմապատկելին և բազմապատկիչն արտադրիչներ են, իսկ բաժանման մէջ—բաժանելին և քանորդը:

Ասածներից հետեւում է, որ բաժանումը ստուգելու համար հարկաւոր է մի միայն բաժանարարը բազմապատկելքանորդով կամ քանորդը—բաժանարարով, ինչ պէս և ցոյց էր տուած վերեր. ստացած արտադրեալը պէտք է բաժանելի թուին հաւասար լինի: Բազմապատկութիւնը ստուգելու համար հարկաւոր է արտադրեալը բաժանել կամ բազմապատկելի կամ բազմապատկիչը թուերին, ստացած քանորդը պէտք է հաւասար լինի կամ բազմապատկելու կամ բազմապատկիչն:

Հարցմունք:

Ի՞աժանման նպատակը ի՞նչ է:

Ի՞աժանումը ի՞նչ գործողութեան նման է: Եւ ո՞ր գործողութեանը ներհակ է:

Ի՞նչու համար բաժանումը սկսում են բարձր կարգի միութիւններից, և ի՞նչու համար նախ և առաջ ստանում ենք քանորդի բարձր կարգի միութիւնները:

Ի՞աժանման մէջ ո՞ր թուերը կարելի է կոչել արտագրիչներ և ի՞նչ պատճառով:

Ո՞ր թիւն է ցոյց տալիս, թէ տուած ամբողջ թիւը — բաժանելին ո՞րքան և ի՞նչ հաւասար մասերի է բաժանած:

Ո՞ր թիւն է կոչվում «բաժանարար» և ո՞րը «բազմապատիկ»:

Ի՞նչ է ընդհանուր բաժանարարը և ո՞ր թուերը կարող են ունենալ ընդհանուր բաժանարար:

Ո՞ր թուերը կոչվում են «սկզբնական» կամ «պարզ», «զոյգ» կամ «անզոյգ»:

Ի՞աժանման մէջ ուրիշ ի՞նչ գործողութիւններ է գործածվում:

Ի՞աժանման ժամանակը ո՞ր թիւը ի՞նչ թուով պէտք է բազմապատիկել և ո՞ր թիւը ի՞նչ թուից հանել:

Եթէ մնացորդի և ցած բերած թուանշանի մէջ բաժանարարը ոչ մի անգամ չպարունակվի, ի՞նչ պէտք է անել:

Այդպիսի դիպուածում քանորդի վերայ ի՞նչու համար 0 են աւելացնում:

Երկանշան կամ բազմանշան բաժանարարը որոնելի

թուով, այսինքն քանորդով բազմապատկելիս, ի՞նչ բանի վերայ պէտք է ուշագրութիւն դարձնել:

Քանորդը կը շատանայ կամ կը սակաւանայ արդեօք, եթէ 1) միայն բաժանարարը բազմապատկենք տասով, 2) եթէ միայն բաժանելին բազմապատկենք տասով, 3) եթէ բաժանելին և բաժանարարը բազմապատկենք մի և նոյն թուով:

Խնչու համար բաժանելի թուի վերջի զրօները միացնում ենք քանորդի հետ, եթէ վերջին հանումից յետոյ բոլորովին մնացորդ չէ ստացվում:

Եթէ բաժանելի թիւը առանց մնացորդի չէ բաժանվում, այն ժամանակ մնացորդը ո՞ր տեղ և ի՞նչ ձեռվ ենք գրում:

Դաժանումն ստուգելու համար մնացորդը ի՞նչ են անում:

Դաժանելի թուից քանի անգամ կարելի է քանորդը հանել:

Դաժանման մէջ ո՞ր թիւը «պարունակելին» է և ո՞րը «պարունակողը»:

Ի՞նչ զանազանութիւն կայ «բաժանման և «պարունակութեան» մէջ:

Ի՞նչ թուով յայտնվում է բաժանումը և ի՞նչ թուով պարունակութիւնը:

Կադիբներ:

Գ ո ւ մ ա ր մ ա ն հ ա մ ա ր օ ր ի ն ա կ :

Ո՞ի ցերեկուգիշերում պատի ժամացոյցը քանի անգամ ընդ ամենը կզարկէ:

Վախ ի՞նչ պէտք է գիտենալ:

“Աալո հարկաւոր է գիտենալ, թէ ի՞նչ կարգով և
ի՞նչ քանակութեամբ հետեւում են ժամացուցի զարկերը:
Ուրեմն ի՞նչ կարգով և ի՞նչ քանակութեամբ հետեւ-
ուում են դոքա:

Ո՞ւկ ժամին ժամացոյցը զարկում է 1 անգամ, եր-
կու ժամին—2 անգամ և այլն ըստ կարգին մինչև 12
ժամը, յետոյ նորէն մի և նոյն կերպով սկսվում է
1-ից և շարունակվում է մինչև 12-ը:

Իուն խնդիրը ի՞նչ է պահանջում:
Որոշել, թէ 24 ժամում ժամացոյցը քանի՞ անգամ է
զարկում ընդ ամենը:

Որովհետեւ ժամացուցի զարկերը հետեւում են կար-
գով 1-ից մինչև 12-ը, ուրեմն առաջ ի՞նչ պէտք է
իմանալ:

Հարկաւար է առաջ իմանալ թէ 12 ժամում ժա-
մացոյցը քանի՞ անքամ կղարկէ ընդ ամենը:

Յետոյ ի՞նչպէս պէտք է իմանալ թէ 24 ժամում քա-
նի՞ անգամ ընդ ամենը կղարկէ,

Այդ իմանալու համար հարկաւոր է 12 ժամու զար-
կերի գումարը բաղմապատկել 2-ով:

Իսյց ի՞նչպէս իմանալ թէ 12 ժամում ժամացոյցը
քանի՞ անգամ կղարկէ:

Առաջ համար հարկաւոր է մեկից մինչև 12 զարկը
գումարել $1+2+3+4+5+6+7+8+9+10+11+12=78$, բայց որովհետեւ $78 \times 2 = 156$, ուրեմն 24 ժա-
մում բոլոր զարկերի գումարը $= 156$:

24 ժամու զարկերի թիւը ի՞նչպէս է յարաբերի ուում
12 ժամու զարկերի թուին:

Անչ տարբերութիւն կայ առաջին երկու ժամու զարկերի և 12 ժամու զարկերի մէջ:

16 ժամում քանի անգամ կզարկէ ժամացոյցը:

$$78+1+2+3+4=88:$$

Քանի անգամ կզարկէ ժամացոյցը 30, 36, 42 և այլն ժամերում:

Հ ա ն մ ա ն հ ա մ ա ն ը ս ո ւ թ ա ն կ:

Ո՞ի մարդ ունէր 34580 մանեթ, նորա տունը այրուելուց յետոյ մնաց 6594 մ., հարկաւորէ իմանալ թէ որքան վնաս կրեց նա:

Կախ և առաջ ինչից է երեսում, որ այդ մարդը իրօք վնասվեցաւ:

Կորանից, որ հրդեհից առաջ նա աւելի փող ունէր, քան թէ յետոյ:

Ո՞րքան նա կունենար հրդեհից յետոյ, եթէ բնաւ վնասված չլինէր:

Եյնքան, որքան որ հրդեհից առաջ ունէր—34580 մանեթ:

Ասկայն հրդեհից յետոյ ինչ գումար մնաց նորա մօտ:

Ո՞իսյն 6594 մանեթ:

Ինչով կարող էր նա որոշել իւր վնասը:

34580 մ. և 6594 մ. գումարների տարբերութիւնը իմանալով:

Ինչ գործողութիւնով կարելի է գտնել այդ տարբերութիւնը:

Հանմամն գործողութիւնով, այսինքն 6594 մ. 34580 մանեթից հանելով կամ թէ 6594 մանեթից սկսած աստիճա-

Նաբար համարելով մինչև 34580 մ:, այն է 34580=345
հար.+80 միաւ. 6594=65 հար.+94 միաւ., 66 հարիւր
ստանալու համար պէտք է 94 միաւորներին աւելացնել
6 միաւ., 66 հար. փոխանակ պէտք է ունենալ 345 հար.
+80 միաւ., 345—66=279 հար., որոնց վերայ պէտք
է աւելացնել 80 միաւ.+6 միաւ., ուրեմն 34580 ստա-
նալու համար 6594-ին պէտք է աւելացնել 279 հար.
+86 միաւ., ահա այս թիւը կլինի այն գումարը, որ
կորցրել է նա հրդեհի ժամանակ:

Ուրեմն այդ մարգու վնասը ընդամենը ո՞րքան է,
34580—6594=27986. նա կորցրել է 27986 մ:

Ի՞նչպէս պէտք է յայտնել այդ կորուստը օրինակի
մէջ տուած թուերով:

Ի՞նչպէս պէտք է որոշել թէ առաջուայ գումարը ո՞ր-
քանով շատ է հիմակուայ գումարից, կամ թէ հիմակ-
վանը ո՞րքանով փոքր է առաջուանից:

Դիցուք թէ վնասը մեզ յայտնի է, իսկ հրդեհից
յետոյ մնացած գումարը անյայտ, այն ժամանակ ի՞նչ-
պիսի խնդիր կծագէր:

Ես ժմ ասենք թէ միմիայն առաջուայ գումարն է
անյայտ, խնդիրն ի՞նչպէս կը փոխուի:

Բ ա զ մ ա պ ա ս կ ո ւ թ ե ա ս ն հ ա մ ս ր օ ր ի ն ա կ :

Ամի վաճառական 3900 փութ ապրանք գնեց,
իւրաքանչիւր փութին 36 մ. տալով, իսկ ի՞նքը
ծախեց փութը 42 մանէթով. հարկաւոր է իմա-
նալ ո՞րքան օգուտ ստացաւ նա:

Ի՞նչ է ասած վաճառականի մասին:

Կորա մասին ասած է, որ նա գնեց 3900 փութ

ապրանք, իւրաքանչիւր փութը ՅԵ մանեթով, իսկ ինքը
ծախեց 42-ով:

Եթէ համեմատենք այն գները, քանով որ վաճա-
ռականը գնել և ծախել է ապրանքը, այն ժամանակ
ինչ կը տեսնենք:

Աը տեսնենք, որ նա ծախել է աւելի թանկ գնով,
քան թէ ինքն էր գնել:

Եթէ մի որ և իցէ ապրանք ծախելուց ստացվում է
աւելի քան թէ նորա համար գործ դրված դրամագլուխը,
ապա աւելորդը ի՞նչպէս է կոչվում:

Կոչվում է, «օգուտ», «դատում», «շահ», «տոկոսիք».
«շահ» կամ «տոկոսիք» կոչվում է յատկապէս այն օգու-
տը, որ ստացվում է հարիւրին, օրինակ հարիւր կոպէ-
կին այսքան շահ է ստացվում, հարիւր մանեթին—այս-
քան, և այլն:

Ա աճառականը մի փութից ո՞րքան օգուտ քաղեց և
ի՞նչպէս պէտք է իմանալ այդ:

Հարկաւոր է ապրանքի համար վճարած գինը հա-
նել ծախելու գնից. 42—36=6, ուրեմն իւրաքանչիւր
փութից 6 մանեթ օգուտ ունեցաւ նա:

Ի՞նչ է պահանջվում իմանալ:

Պահանջվում է իմանալ, թէ իւր գործ դրած դրա-
մագլխից ո՞րքան օգուտ ստացաւ:

Ա աճառականի ստացած օգտի մասին մեզ ի՞նչ է
յայտնի:

Մեզ յայտնի է, որ իւրաքանչիւր փութից նա 6
մանեթ օգուտ է ստացել:

Ի՞նչպէս պէտք է իմանալ, թէ ամբողջ օգուտը ո՞ր-
քան է:

Այդ իմանալու համար հարկաւոր է Յ մանեթը բազ-
մապատկել 3,900-ով. $3,900 \times 6 = 23,400$:

Ուրեմն վաճառականը ինքը ի՞նչ գումար էր վճարել
բոլոր ապրանքի համար, և նորա ստացած օգուտը այդ
գումարի ո՞ր մասն է:

Եթէ ստացած օգուտը յայտնի լինի, իսկ գնելու
կամ ծախելու գինը լինի անյայտ, կամ եթէ յայտնի
լինին բոլոր օգուտը, գնելու և ծախելու գները, բայց
անյայտ լինի թէ քանի փութ ապրանք է գնած, այն
ժամանակ ի՞նչ խնդիրներ կարողեն ծագել դոցանից:

Եթէ վաճառականի ստացած բոլոր օգուտը 11,700
մանեթ լինի, ուրեմն ի՞նչ գնով էր ծախել մի փութը:

Եթէ բոլոր 3,900 փութից վաճառականը ստացաւ
11,700 մանեթ օգուտ ընդ ամենը, ուրեմն 1 փութից
պէտք է ստանար այդ գումարի 3900-դ մասը. այսինքն
 $\frac{1}{3900} \times 11,700$ կամ $\frac{1}{39} \times 117$, որ հաւասար է 3 մա-
նեթի, բայց որովհետև նա մի փութը գնել է 36 մա-
նեթով, ուրեմն ինքը ծախել է $36 + 3 = 39$ մանեթով:

Բաժան մաս ու բաժան համար օրեւն է:

Ո՞ի մշակ իւր աշխատութեամբ շաբաթը ստա-
նում էր 2 մանեթ 94 կոպէկ, հարկաւոր է իմա-
նալ; թէ ի՞նչքան վարձ է ստացել նա մի օրում:

Խնդրի մէջ ի՞նչ է յայտնի և ի՞նչ անյայտ,

Խնդրի մէջ յայտնի է աշխատանքի ժամանակը, որը
= 6 օրի, և յայտնի է նոյնպէս այդքան ժամանակ աշ-
խատութեան համար ստացած վարձը, որը = 2 մանեթ
94 կոպէկին. բայց անյայտ է և հարկաւոր է իմանալ,
թէ որքան է մշակի օրական վարձը:

Վ՞նչակես պէտք է դառնել անյայտը:

Եթէ մշակը 6 օրում ստացել է վարձ 2 մանեթ
94 կոպէկ, ուրիմն մի օրումը նա պէտք է ստանայ 2
մանեթի և 94 կոպէկի վեցերորդ մասը. իսկ 2 մանե-
թի և 94 կոպէկի վեցերորդ մասը = 4 ուղալթ. + 9
կոպ. = 49. կոպէկին:

Խնդրի փոփոխութիւններ:

1) Եթէ մշակը օրը ստանում էր 49 կոպ., ուրեմն որքան պէտք է ստանայ նա մի շաբաթում:

2) *Մշակը*, օրական 49 կ. ստանալով, աշխատել է
2 մանելը 94 կ., ուրեմն քանի՞ օր է բանել:

3) Եթե ամբողջ շաբաթում ստացած վարձը համատենք օրական վարձին հետ. ի՞նչ յարաբերութիւն կդառնենք նոցա մէջ:

Ը աբաթական վարձը = 2 մանեթին 94 կ-ին, այս
պատճառով նա շատ է օրական վարձից:

(Օրական վարձը = 49 կոպէկին, այս պատճառով օրականը փոքր է շաբաթական վարձից:

Ը արաթական վարձը օրական վարձի վեցապատիկն է, իսկ օրական վարձը շաբաթականի վեցերորդ մասն է:

to see me. You know I'm here.

1. Ա և Ի վաճառականները վերադասնալով
տօնավաճառից համեմատեցին իւրեանց ստացած
օգուտները և տեսան որ Ա-ի ստացած օգուտի
կէսը հաւասար էր Ի-ի ստացած օգուտի $\frac{1}{3}$ մա-
սին, որքան օգուտ է ստացել Ի-ը, եթէ Ա-ը ստա-
ցել է 605 մանէթ:

1) Ա-ի օգտի մասին ի՞նչ է յայտնի:

Որ Ա-ի օգուտը = 605 մանեթին:

Ի-ի օգտի մասին ի՞նչ է յայտնի:

Որ Ի-ի օգտի $\frac{1}{3}$ մասը Ա-ի օգտի $\frac{1}{2}$:

2) Եթե մենք գիտենայինք Ի-ի օգտի $\frac{1}{3}$ մասը,
դորանով ի՞նչ կարող էինք գտնել:

Ի-ի ստացած բոլոր օգուտը, եթե այդ $\frac{1}{3}$ -ը բաղկապատկեինք Յով:

Ի-ի օգտի երրորդ մասը ի՞նչ գումարի կիսին է
հաւասար:

Ա-ի օգտի կիսին:

Ա-ի օգտի կեսը ո՞րքան է.

$$\frac{605}{2} \text{ մանեթի} = 302 \text{ մանեթին } 50 \text{ կ.-ին:}$$

Ուրեմն Ի-ի օգուտը ո՞րքան է:

$$302 \text{ մանեթ } 50 \text{ կ.} \times 3 = 907 \text{ մանեթ } 50 \text{ կ.}$$

Ի-ը տօնավաճառանոցում վաստակեց 907 մանեթ 50
կ. ո՞րքան վաստակեց Ա-ը, եթե Ա-ի ստացած կեսը
հաւասար է Ի-ի օգտի երրորդ մասին.

Տօնավաճառից յետոյ երկու վաճառականներ համեմատելով իւրեանց ստացած օգուտը տեսան, Ի-ի օգուտը
կիսով առաւել է Ա-ի օգտից, այսինքն 605 մանեթից,
ուրեմն որքան է Ի-ի օգուտը:

$$\text{Ի-ի օգուտը} = 605 \text{ մանեթին} + \frac{605}{2} \text{ մանեթ} = 605 +$$

$$302 \text{ մանեթ } 50 \text{ կ.} = 907 \text{ մանեթ } 50 \text{ կ.-ին:}$$

1) Երկու վաճառականներ այլ տեսան, որ Ա-ի

օգուտը $\frac{1}{3}$ մասով փոքր է ՚Ն-ի օգտից, որը = 907 $\frac{1}{2}$
մանեթի, ուստի ո՞րքան է ՚Ն-ի օգուտը, և այլն:

2. Երեք մարդ ՚Ն, ՚Ն, ՚Վ բաժանեցին իւրեանց մէջ
4 փութ 15 գրուանքայ շաքար այնպէս, որ ՚Ն-ը 15
գրուանքով, իսկ ՚Ն-ը 10 գրուանքով առաւել ստացան
՚Վ-ի ստացածից. Հարկաւոր է իմանալ, թէ իւրաքան-
չիւրը ո՞րքան ստացաւ:

՚Ն-և ՚Ն-ը առաւել ստացան ՚Վ-ից 15+10 գրուան-
քայով, $15+10=25$. 4 փ. $\times 40$ գր.=160 գր. 160 գր.
+15 գր.=175 գր. ին. 175-25=150 գր.: ՚Ն-ու քա-
նակութիւնը (150) 3 հաւասար մաս է բաժանած. 150-ի
 $\frac{1}{3}$ մասը = 50 գր., ուրեմն ՚Ն-ը ստացել է 50 գրուան-
քայ կամ թէ 1 փ. և 10 գր. ՚Ն-ը ստացել է նոյնպէս
1 փ. 10 գր.+10=1 փ. 20 գր., իսկ ՚Ն-ը ստացել է
1 փ. 10 գր.+15 գր.=1 փ.+25 գր.:

Խ Ն Դ Ր Ի Փ Ո Փ Ո Խ Ո Ա Լ Թ Ի Կ Ա Խ Ե Ր :

1) Երեք մարդ ՚Ն, ՚Ն, ՚Վ զնեցին շաքար և բաժա-
նեցին միմեանց մէջ այնպէս, որ ՚Ն-ը 5 գր. առաւել
ստացաւ ՚Ն-ից. իսկ ՚Ն-ը 10 գր. առաւել, ՚Վ-ից.—՚Ն-ի
մասը = 1 փ. 20 գր., ինչքան շաքար էին դնել նոքա-
լնդ ամէնը:

՚Ն-ը ստացաւ 1 փ. 20 գր., ուրեմն ՚Ն-ը ստացել է
1 փ. 20 գր.+5 գր. ուրեմն երկուսը միասին ստացան
3 փ. 5 գր. [1 փ.+1 փ.=2 փ., 20 գր.+20 գր.=
40 գր.=1 փ., 2 փ.+1 փ.=3 փ., 3 փ.+5 գր.=
3 փ. 5 գր.]. ՚Վ-ը 10 գրուանքով պակաս ստացաւ
՚Ն-ից, ուրեմն նա ստացաւ 1 փ. 20 գր.—10 գր., կամ

1 փ. 10 գր., ուրեմն բոլոր գնած շաքարը էր 3 փ.+
5 գր.+1 փ. 10 գր. կամ թէ 4 փ. 15 գր.

2) Երեք մարդ Ա. Բ. Գ. բաժանեցին իւրեանց
մէջ 4 փ. 15 գր. շաքար այնպէս, որ Ա. Բ. 5 գր. աւելի
ստացաւ Բ.-ից, իսկ Գ.-ը 10 գր. պակաս ստացաւ Բ.-ից,
իւրաքանչիւրը որքան ստացաւ:

Գ.-ը 15 գր. պակաս ստացաւ Ա.-ից, ուրեմն Ա.-ը 15
գր. առաւել ստացաւ Գ.-ից, իսկ Բ.-ը 10 գր. առաւել
ստացաւ Գ.-ից, ուստի Ա.-ը և Բ.-ը միասին Գ.-ից
առաւել ստացան 25 գր., ուրեմն....Ա.յս օրինակին
համեմատ կարելի է կաղմել հետեւալ ինդիրը:

Ո՞ի շինութեան վերայ աշխատում էին 12 մարդ,
որոնցից 4-ը հիւսն էին (դիւրդար). իսկ 8-ը գալատոզ-
ներ. ամէն մի հիւսնը կալատողներից օրական 4 կո-
պէկ առաւել էին ստանում. իսկ բոլոր աշխատողնե-
րի օրական վարձը միասին 12 մանէթ 4 կոպէկ էր
անում:

Որքան էր ստանում իւրաքանչիւր գալատոզը և իւրա-
քանչիւր հիւսնը:

Հիւսները գալատողներից առաւել ստացան 4 կոպէկ
 $\times 4 = 16$ կոպ. լնդհանուր գումարից (12 մանէթ 4 կ.)-
այս գումարը հանելուց յետոյ, նոքա մնացածը գալա-
տողների հետ հաւասար բաժանեցին:

3) Բ.-ը իւր հանդերձի համար մահուդ գնեց, որի
արշինը 4 մանէթ արժէր, որքան արշին մահուդ գնեց,
եթէ 12 մանէթ փող վճարեց առած մահուդի համար:

Խնդրի մէջ ի՞նչ բան է յայտնի:

Ո՞ի արշին մահուդի գինը:

Ուրիշ ի՞նչ է յայտնի:

Առլոր գնած մահուդի գինը.

Խնչ բան է անյայտ:

Գնած մահուդի արշինների քանակութիւնը:

Ուրեմն քանի արշին մահուդ է գնել Ի-ը:

Այսքան, որքան անգամ 12-ից կարելի է 4 հանել.

12 : 4 = 3:

Խնդրի փոփոխութիւներ:

1) Եթէ գիտենք բոլոր գնած մահուդի համար վճարած գումարը և մի արշինի գինը, ինչպէս պէտք է իմանանք, թէ քանի արշին է գնած:

2) Ի-ը գնեց 3 արշին մահուդ, արշինը 4 մանեթով, ինչքան վճարեց նա բոլորին:

3) Ի-ը 3 արշին մահուդին տուել է 12 մանեթ, որքան արժէ 1 արշինը:

4) Պանի արշին նա պէտք է գներ, որ վճարեր այնքան, որքան վճարել էր Ի-ը և այլն 34):

Քանի արշին նա պէտք է գներ, որ վճարեր այնքան, որքան վճարել էր Ի-ը և այլն 34):

ԵՐԿԵՑՆԱԼԻԹԵԼԵՐ ԾԵՆԵՐՈՒԹԵԼԵՐ ԵՎ
ԵՅԼ ԶԵՓԵՐԻ ԵՎ ԴԻՄՈՒԿԻՐ (*):

1. Երկայնութեան չափ:

Ո՞ի մղոնը ունի 7 վէրստ:

» վէրստը » 500 սաժէն:

» սաժէնը » 3 արշին:

» արշինը » 4 քառորդ:

*) Տես Ա Տանօթութիւնը դրբե վերջը:

մի սաժէնը	ունի	7	ոտնաշափ (Փուտ):
» ոտնաշափը	»	12	բթաշափ (գիշիմ):
» բթաշափը	»	10	գիծ:

2. Առակերևոյթների չափ:

Որ և իցէ հրապարակ կամ տափարակ չափելու համար, այսինքն լայնութեամբ և երկայնութեամբ նորամակերևոյթի բոլոր տարածութիւնը իմանալու համար, գործ է ածվում «քառակուսի» չափը (\square), այսինքն քառանկիւնը, որ չորս ուղիղ անկիւններ և չորս հաւասար կողմեր ունի երկայնութեամբ և լայնութեամբ, զոր օրինակ, վերշոկ, քառորդ, արշին, սաժէն և այլն, այդպիսի վերշոկը, քառորդ և այլն կոչվում են «քառակուսի», օրինակի համար եթէ վերառնունք մի քառանկիւն, որը մի արշին երկայնութիւն և մի արշին լայնութիւն ունի, և այդ քառանկիւնը բաժանենք փոքրագոյն քառանկիւնների, որոնց լայնութիւնը և երկայնութիւնը մի մի քառորդ լինի, այն ժամանակ կստանանք 16 այդ տեսակ փոքրագոյն քառակիւններ, այսինքն քառակուսի քառորդներ, ինչպէս այս երեսում է հետեւալ տախտակից:

Քառ.	1	2	3	4
Քառ.				
5	6	7	8	
9	10	11	12	
13	14	15	16	

Խմանալու համար թէ քառակուսի արշինը քանի՞
քառակուսի քառորդ ունի, հարկաւոր է որ և իցէ եր-
կու կողմիցը միմեանցով բազմապատկել այսինքն աջ
կամ ձախ կողմը վերևի կամ ներքեի կողմով, և կստա-
նանք որոնելի թիւը. ($4 \times 4 = 16$): Ուստի
մի քառ. մղոնը ունի 49 քառ. վէրստ ($7 \times 7 = 49$).
 » » վէրստը » 250000 » սաժէն (500×500).
 » » սաժէնը » 9 քառ. արշին
 » » արշինը » 256 քառ. վերշոկ
 » » սաժէնը » 49 քառ. ոտնաչափ
 » » ոտնաչափը » 144 քառ. բթաչափ
 » » բթաչափը » 100 քառ. գիծ:

Յ. Վարմինների ծաւալի չափը:

Քառակուսի չափով իմանում ենք որ և իցէ մարմինի
միայն երկայնութիւնը և լայնութիւնը, այսինքն նորա
մակերեսոյթը, բայց եթէ մի և նոյն ժամանակ պէտք
է իմանալ մարմինի բարձրութիւնը կամ հաստութիւնը,
այսինքն եթէ հարկաւոր է իմանալ մարմինի բոլոր
ծաւալը (երկայնութիւնը, լայնութիւնը, բարձրութիւ-
նը կամ խորութիւնը), այն ժամանակ պէտք է գործ-
ածել առանձին չափ, որ կոչվում է «խորանարդային»,
«խորանարդ» բառից. իսկ խորանարդ կոչվում է ամե-
նայն մարմին, որը շրջապատված է վեց հաւասար տափա-
րակներով (քառակուսիներով), այսինքն վերևի, ներքեի և
չորս կողքի տափարակներով: Ուստի եթէ վեր առնունք
մի այնպիսի փայտի կտոր, որի երկայնութիւնը, լայ-
նութիւնը և խորութիւնը կամ հաստութիւնը լինին

կէս կէս արշին, այն ժամանակ նորա իւրաքանչիւր տափարակը կունենայ 64 քառակուսի վէրշօկ, իսկ ամրող ծաւալը 512 խորանարդ վէրշօկ, որովհետեւ վերեկ մակերեսյթի լայնութիւնից և երկայնութիւնից ստացած արտադրեալը պէտք է բազմազատկել բարձրութիւնով կամ խորութիւնով ($8 \times 8 = 64$, $64 \times 8 = 512$). ուրեմն որ և իցէ քառակուսի միութիւնների գումարը գտնելու համար հարկաւոր է միայն երկու արտադրիչներ ունենալ—այն է երկայնութիւն և լայնութիւն, իսկ խորանարդի միութիւնների գումարը իմանալու համար հարկաւոր է երեք արտադրիչներ ունենալ. մարմինի երկայնութիւնը, լայնութիւնը և բարձրութիւնը կամ խորութիւնը: Ուրեմն

մի խորան. մկոնը ունի 343 խորան. վէրստ ($7 \times 7 \times 7$)
 » » վէրստը » 125,000,000 խորան. սաժէն
 (500×500×500)

մի խորան. սաժէնը ունի 27 խորան. արշին

» » արշինը	» 4096	» վէրշօկ
» » սաժէնը	» 343	» ոտնաչափ
» » ոտնաչափը	» 1728	» բթաչափ
» » բթաչափը	» 1000	» դիմ:

4. Նեղուկ ժարմինների չափը:

Մի սակառը ունի 40 վեդրօ

» վեդրօն (*) » 10 շտօփ
 » շտօփը » 2 շտօփ կամ կրուժկայ:

(*) Մի վեդրօն 750 խորանարդ բթաչափ ունի. 25 խորանարդ բթաչափ մաքուր չուրը 1 դրվանքայ է քաշում. ուրեմն խորանարդ չափավկարելի է չափել և հեղուկ մաքանքները, այսինքն կարելի է ի մանաւնցաւ կը իսկը. քանիակութիւնը եւ ծաւալը.

5. Հայի չափելութեան կամ կուլը ունի 2 օսմինա

» օսմինան » » » 4 չէտվէրիկ

» չէտվէրիկը » » » 4 չէտվէրտկա

» չէտվէրտկան » » » 2 օսմուշկա, կամ

գարնցա

6. Առեալուական կշիռ:

Մի բերդովէցը ունի 10 փութ

» փութը » 40 գրլանքայ (Փունտ)

» գրլանքան » 32 լոտ կամ 96 մսխալ (զօլօտնիկ)

» լոտը » 3 մսխալ

» մսխալը » 96 մոս:

7. Կեղավաճառութեան կշիռ:

Մի գրլանքան ունի 12 ունկի (գրեթէ 48 մսխալ)

» ունկին » 8 գրախմ

» գրախմը » 3 սկրուպուլ

» սկրուպուլը » 20 գռան (գարեհատ)

8. Կրամեր.

Մի իմպերեալը ունի 10 սուրլի (սոկի)

» կէսիմպերեալը » 5 սուրլի

» սուրլին » 10 գրիվէն (ուղալթուն)

» գրիվէնը » 10 կոպէկ

» ալտինը » 3 կոպէկ

» կոպէկը » 2 գենգա (գրօշ)

» գենգան » 2 պոլուշկա

9. Ձամանակի չափը:

Մի տարին ունի 12 ամիս կամ 365 օր (Նահանջ տարին 366 օր ունի)

Մի ամիսը ունի 30 օր (*)

- » շաբաթը » 7 օր
- » օրը » 24ժամ
- » ժամը » 60 րոպէ
- » րոպէն » 60 վայրկեան

10. Ժաղթի չափ:

Մի ստապան (պուրակ, օչմայ) ունի 20 դեստ (դաստայ)

- » դեստը » 24 թերթ:

ԵՐԵՋԻՆ ԵՍՏԻՃԱՆԻ

Ընուանաւոր թուերի:

Կ ս ս ս թ ո ւ մ մ ն ։

(Օրինակի համար, եթէ մենք գիտենք թէ մի վէրստը քանի սաժէն ունի, ուրեմն հեշտութեամբ կարող ենք իմանալ թէ 9 վէրստը քանի սաժէն կանէ. զորա համար հարկաւոր է միայն 500 սաժէնը բազմապատկել 9-ով կամ թէ 9 վէրստը բազմապատկել 500-ով և

*) Այս թիւը գործ է: անվաւոր յարմարութեան համար, ապա թէ ոչ մի քանի ամիսներ (յունիար, մարտ, մայիս, յուլիոս, օգոստոս, հոկտեմբեր, դեկտեմբեր) 31 օր ունին, իսկ մի քանիսը (ապրիլ, յունիս, սեպտեմբեր, նոյեմբեր) 30 օր ունին. հասարակ տարում փետրարը 28 օր ունի, իսկ չորս տարին մի անգամ, այսինքն նահանջ տարում, 29 օր ունի:

կստացվի այն թիւը, որ ցոյց կտայ մեղ թէ 9 վէրստը
քանի սաժէն ունի:

Ուրեմն հարկաւոր է բարձրագոյն կարգի անուանաւոր
թիւը բազմապատկել «յայտարար» թուով, կամ՝ ընդհա-
կառակը:

Յայտարար թիւ կոչվում է այն թիւը, որ «յայտ է առ-
նում», այսինքն ցոյց է տալիս թէ բարձրանունը քանի հա-
ւասար ստորանուն միութիւն է պարունակում իւր մէջ,
փութը — 40 գրվանքայ, վէրստը — 500 սաժէն, սաժէնը
— 3 արշին և այլն:

Ուրեմն «կոտորումն» մի այնպիսի գործողութիւն է,
որով բարձրանուն միութիւնները ստորանուն միութիւննե-
րի են փոխվում, որով ուրեմն ամբողջները մասերի են
կոտորվում:

Անուանաւոր թուերը լինում են պարզ (6 փութ, 5
ամիս, 11 ոռւրի) և բարդ (6 փութ, 33 ֆունտ, 15 լոտ,
կամ 5 ամիս, 3 շաբաթ, 4 օր): Կռաջին գիպուածում,
առաջարկած խնդրի համաձայն, բարձրանուն միութիւննե-
րի թիւը ստորանուն միութեանց դարձնելու համար,
հարկաւոր է տուած թիւը նախ բազմապատկել իրան
և մերձագոյն ստորանուն թուին վերաբերեալ յայտարար
թուով, յետոյ ստացած արտադրեալը բազմապատկել նոյն-
պէս հետեւեալ յայտարարներով ըստ կարգին, մինչեւ որ
դժումին խնդրին համապատասխանող թիւը:

(Օրինակի համար, ասենք թէ մեղ առաջարկել են լու-
ծելու յետագայ հարցը. 6 փութը քանի լոտ ունի:
Կայս հարցը լուծելու համար 6 փութը պէտք է բազմա-
պատկել մերձագոյն յայտարար թուով (40), ստացած
արտադրեալը — հետեւեալ յայտարար թուով (32), այսպէս

$$\begin{array}{r}
 6 \text{ գութ } կամ \text{ թէ } 6 \text{ զ.} \times 40 \text{ դր.} \times 32 \text{ լ.} = 7680 \text{ լոտին}, \\
 \times 40 \\
 \hline
 240 \text{ դրկան.} \\
 \times 32 \\
 \hline
 480 \\
 720 \\
 \hline
 7680 \text{ լոտ:}
 \end{array}$$

Ուրեմն որոնելի թիւը = 7680 լոտին:

Երկրորդ դիպուածում, այսինքն եթէ տուած է բարդ անուանաւոր թիւ, գործողութիւնը կատարվում է մի և նոյն կերպով, միայն թէ իւրաքանչիւր ստացած արտադրեալին պէտք է աւելացնել իրան համանուն թիւը, եթէ կայ այդպիսի թիւ տուածի մէջ: Օսրօրինակ, ասենք թէ առաջարկած է իմանալու, թէ 8 շարաթը, 5 օրը, 16 ժամը քանի ժամ կանեն: Առաջարկութիւնը լուծերու համար, 8 շարաթը պէտք է բազմապատկել մերձագոյն յայտարար ժուռով (7-ով), յետոյ ստացած արտադրեալին հետ, այսինքն օրերի թուի հետ, պէտք է գումարել տուած օրերի թիւը և այլն հետեւալ կերպով:

$$\begin{array}{r}
 8 \text{ եօթնեակ. } 5 \text{ օր. } 16 \text{ ժամ} \\
 \times 7 \\
 \hline
 56 \\
 + 5 \\
 \hline
 61 \text{ օր} \qquad \qquad \qquad կամ \text{ թէ} \\
 \times 24 \\
 \hline
 244 \text{ } 8 \times 7 \text{ օր. } + 5 \text{ օր. } \times 24 \text{ ժ. } + 16 \text{ ժ. } = 1480 \text{ ժամ:} \\
 122 \\
 1464 \\
 + 16 \\
 \hline
 1480 \text{ ժամ:}
 \end{array}$$

Ուրեմն որոնելի թիւը = 1480 ժամին:

ԵՐԿՐՈՐԴ ՍՍԾԻՃԱՆ:

Ա և բ ա ծ ու մ ն:

Կոտորման միանգամայն հակադիր գործողութիւնը է վերածումն. կոտորման միջնորդութեամբ տուած բարձրանուն թիւը դարձնում ենք պահանջած ստորանուն թուի, իսկ վերածման միջնորդութեամբ դորա հակառակը, այսինքն դարձնում ենք ստորանուն թիւը պահանջած բարձրանուն թուի: Ռուազին դիպուածում գործողութեան վերջին հետեանքը ստանալու համար, կարգով տուած թուերը բաղմապատկում ենք յայտարարներով, իսկ երկրորդ դիպուածում հետեանքը, այսինքն պահանջած թիւը ստանում ենք հակառակ գործողութեամբ, այսինքն տուած թիւը բաժանում ենք նոյնպէս կարգով և դարձեալ նոյն յայտարարներին. բայց առաջին դիպուածում մենք բարձրանուն թուերից հետզհետէ իջնում ենք գէպի ստորանուն թուերը, իսկ երկրորդ դիպուածում նոյնպէս հետզհետէ բարձրանում ենք ստորանուն թուերից գէպի բարձրանունները, մինչեւ որ պահանջածին համանում ենք:

(Օրինակի համար գիցուք թէ տուած է իմանալու, թէ 12436 լոտը քանի փութ է անում: Որոնելի թիւը ստանալու համար պէտք է տուած թիւը բաժանել նախ մերձագոյն յայտարար թուին (32), յետոյ ստացած քանորդը, որ արդէն գրուանքաներ է, պէտք է բաժանել յետագայ յայտարար թուին (40) և այս կերպով կստանանք պահանջած թիւը:

$$\begin{array}{r}
 12436 | 32 \\
 96 | 388 \text{ } q.p. \\
 \hline
 283 \\
 256 \\
 \hline
 276 \\
 256 \\
 \hline
 20 \text{ } L^{\text{out}}
 \end{array}
 \qquad
 \begin{array}{r}
 388 | 40 \\
 360 | 9 \text{ } \phi. \\
 \hline
 28 \text{ } q.p.
 \end{array}$$

Ուրեմն 12436 $L=9$ $\phi.+28$ $q.p.+20$ L^{out} :
 47795 արշինը քանի՞ մղոն կանէ: Եթէրորդ օրինակ:

$$\begin{array}{r}
 47795 | 3 \\
 3 | 15931 \text{ } uwd. \\
 \hline
 17 \\
 15 \\
 \hline
 27 \\
 27 \\
 \hline
 9 \\
 9 \\
 \hline
 5 \\
 3 \\
 \hline
 2 \text{ } arz.
 \end{array}
 \qquad
 \begin{array}{r}
 15931 | 500 \\
 1500 | 31 \text{ } qk.p. \\
 \hline
 931 \\
 500 \\
 \hline
 431 \text{ } uwd. \\
 31 | 7 \\
 28 | 4 \text{ } mghn \\
 \hline
 3 \text{ } qk.p.
 \end{array}$$

Ուրեմն 47795 արշինը = 4 մղոնի, 3 վերստ, 431
 սաժ. 2 արշ:

Որովհետև կոտորումն և վերածումն միմեանց ներհակ
 գործողութիւններ են, ուստի մի գործողութիւնը ստուգ-
 վում է միւսով, այսինքն եթէ կոտորման միջնորդութեամբ
 որ և իցէ բարձրանուն թուից ստացանք ստորանուն
 թիւ, ուրեմն վերածման միջնորդութեամբ պէտք է նոր-

Էն ստանանք տուած բարձրանուն թիւը և ընդհակառակներ:

(Օրինակ

1) 3 ամիս, 2 շաբաթ, 5 օրը ժամերի դարձնել և
ստուգել:

$$\begin{array}{r}
 3 \text{ ամ.} & 2472 | 24 \\
 \times 4 & 24 | 103 \text{ օր.} \\
 \hline
 12 & 72 \\
 +2 & 72 \\
 \hline
 14 \text{ շաբ.} & 28 \\
 \times 7 & 5 \text{ օր.} \\
 \hline
 98 & \\
 +5 & \text{Ուրեմն} \\
 \hline
 103 \text{ օր} & \\
 \times 24 & \\
 \hline
 412 & 3 \text{ ամ.} 2 \text{ շաբ.} 5 \text{ օր} = 2472 \text{ ժամ.} \\
 206 & Իսկ 2472 \text{ ժամ.} = 3 \text{ ամ.} 2 \text{ շաբ.}, 5 \text{ օր}: \\
 \hline
 2472 \text{ ժամ.} &
 \end{array}$$

2) 25 փութը, 16 գրուանքան լօտերի դարձնել և
ստուգել:

$$\begin{array}{r}
 25 \text{ փութ} & 32512 | 32 \\
 \times 40 & 32 | 1016 \text{ գր.} \\
 \hline
 1000 & 51 \\
 +16 & 32 \\
 \hline
 1016 \text{ գր.} & 192 \\
 \times 32 & 192 \\
 \hline
 2032 & 0 \text{ լօտ.}
 \end{array}$$

$$\begin{array}{r}
 3048 \quad \text{Ուրեմն} \quad 25 \text{ գր.} 16 \text{ գր.} = 32512 \text{ լօտ.} \\
 32512 \text{ լօտ.} \quad իսկ \quad 32512 \text{ լ.} = 25 \text{ գր.} 16 \text{ գր.}: \\
 \hline
 \end{array}$$

ԵՐՈՐԴ ԸՍՏԻՃԱՆ:

Գ ու մ ա լ մ ա լ ո ւ մ ն ։

Անուանաւոր թուերի գումարումը կատարվում է միանգամայն նոյնպէս, ինչպէս և վերացեալ թուերի գումարումը։

1) Խնչպէս որ վերացեալ թուերը գումարելիս՝ տուած թուերը գրվում են միմեանց տակ այնպիսի շարքով, որ միաւորները լինին միաւորների տակ, տասնաւորները—տասնաւորների տակ և այլն, նոյնպէս և բարդ անուանաւոր թուերը գումարելիս պէտք է գրել նոցա միմեանց տակ, դարձեալ շարքով, որ համանուն անուանաւոր թուերը գրած լինին մինը միւսի տակ, զորօրինակ. գրվանքաները—գրվանքաների տակ, փութերը—փութերի տակ, և այլն։

2) Խնչպէս վերացեալ թուերի գումարումը սկսվում է սառըին կարգի միութիւններից, նոյնպէս և անուանաւոր թուերի գումարումն պէտք է սկսել նմանապէս ստորանուն թուերից, որովհետև դոցա գումարից երբեմն կարող է ստացվիլ բարձրանուն թիւ, որը պէտք է աւելացվի հետեւալ իրան համանուն թուին։

(Օրինակի համար. գումարենք հետեւալ բարդ անուանաւոր թուերը.

1) 6 մանեթ 3 ուզալթուն 5 կոպ. 1 գրօշ. 2) 3 մ. 7 ուզալ 1 կոպ. 2 գրօշ. 3) 12 մ. 8 ուզալ. 7 կոպ. 4 գրօշ.

Աւախ այս թուերը պէտք է գրել միմեանց տակ, ինչպէս ասած է վերել, և տակը գիծ քաշել, ինչպէս

որ այս լնդունած է և վերացեալ թուերի գումարման
համար,

6	ման.	3	ուղալ.	5	կոպ.	1	դրօշ.
3	>	7	>	1	>	2	>
12	>	8	>	7	>	4	>
22	ման.	9	ուղալ.	6	կոպ.	1	դրօշ:

Այսժմ գումարումն սկսենք ստորանուն թուերից.
1 դրօշ.+2 դրօշ.+4 դրօշ.=7 դրօշ.=3 կոպ.+1 դրօշ., ուստի
1 դրօշ. պէտք է գրել գրօշների տակ, իսկ 3 կոպ. աւելա-
ցնել կոպէկներին. 3 կոպ.+5 կոպ.+1 կոպ.+7 կոպ.=
16 կոպ.=1 ուղալ.+6 կոպ., 6 կոպ. գրում ենք կոպէկ-
ների տակ, իսկ 1 ուղալ. աւելացնում ենք ուղալթուն-
ներին. 1 ուղալ.+3+7+8=19 ուղալ.=1 ման.+9
ուղալ., 9-ը ուղալ. գրում ենք ուղալթունների տակ,
իսկ 1 ման.-ը աւելացնում ենք մանէթներին. 1 ման.
+6 ման.+3 ման.+12 ման.=22 ման. ուրեմն գումարը կլինի 22
ման. 9 ուղալ. 6 կոպ. 1 դրօշ:

Երկրորդ օրինակ 1) 21 ֆ. 9 լօտ. 2 զօլ. 2)
17 ֆ. 15 լ. 3) 12 ֆ. 1 զօլ. 4) 7 լօտ:

21	ֆ.	9	լ.	2	զօլ.
17	>	15	>	—	>
12	>	—	>	1	>
—	>	7	>	—	>
1	ֆ.	11	ֆ.	—	լ. — զօլ.:

Այս օրինակից հետեւում է. 1) որ եթէ գումարելի
թուերի մէջ պակաս է մի որ և իցէ անուանաւոր թիւ,
նորա աեղ գրում են այսպէս նշան (—), կարելի

Է գրել նմանապէս և 0. 2) որ գումարից կարող է գոյանալ մի այնպիսի անուանաւոր թիւ, որի համա- նունը գումարելի թուերի մէջ չկայ, գումարի մէջ նա գրվում է առանձին իւրեան պատշաճեալ տեղը: Գու- մարելու համար տուած թուերը. 21 ֆ. 9 լ 2 զօլ. +17 ֆ. 15 լ +12 ֆ. 1 զօլ. +7 լ =1 ֆ. 11 ֆունտին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

S *w* *u* *n* *e* *d* *u* *b* *l* *w* *d* *p* *w* *p* *z* *n* *e* *d* *u*.

Վնուանաւոր թուերի հանումը՝ նմանապէս կատարվում է վերացեալ թուերի հանման եղանակով։ «Ես, տուած երկու բարդ անուանաւոր թուերը, նուազելին և հանելին, գրվում են միմեանց տակ, ինչպէս և գումարման մէջ, հանելին նուազելու տակ։» Եթոյ հանելու տակ քաշում են գիծ և յետոյ սկսում են հանումն. հանումը սկսվում է նոյնպէս ստորանուն թուերից, և եթէ հանելի թիւը մեծ լինի նուազելուց, պէտք է վերառնուլ նախընթաց բարձրանուն թուեր մի միութիւն և վերլուծելնորան, ինչպէս որ այդ անում էինք այդպիսի գիպուածում վերացեալ թուերի հանման մէջ։

() *p h'lu w h'lu b' p:*

$$1) \frac{q_1 n_{12} \delta_L}{\delta_{12} n_{12}} = \frac{9 \text{ ф.} \cdot 15 \text{ ф.} \cdot 8 \text{ л.}}{4 \text{ ф.} \cdot 23 \text{ ф.} \cdot 5 \text{ л.}} = \frac{1}{2} \text{ л.}$$

2 զօլօտնիկը կարելի չէ հանել 1 զօլու ուստի պէտք է
8 լուսից վերաբռնու 1 լուս, 1 լ=3 զօլ., 3 զօլ+1 զ.

=4, $4-2=2$, ուստի զօլոտնիկների տակ գրած է 2, տուած 8 լոտից մնաց 7. $7-5=2$ լոտ, որը գրած է լոտերի տակ, 23 ֆ. անկարելի է հանել 15 ֆ. ուստի հարկաւոր է 9 փութից վերառնուլ 1 փ., 1 փ.=40 ֆ. $40+15=55$ ֆ. $55-23=32$ ֆ., որը գրած է փութերի տակ, տուած 9 փ.-ից մնաց 8 փ. 8 փ.-4=4 փ., որը գրած է փութերի տակ, ուրեմն 9 փ. 15 ֆ. 8 լ 1 զօլ, և 4 փ. 23 ֆ. 5 լ 2 զօլ. Այդ եղած տարբերութիւնը = 4 փ. 32 ֆ. 2 լ և 2 զօլ.

$$2) \text{ Այս մարդ ստացել է } 12 \text{ ման. } 0 \text{ ուշ. } 0 \text{ կ. } 1 \text{ դրչ.} \\ \text{Միսել } \frac{8}{3} \Rightarrow \frac{7}{2} \Rightarrow \frac{5}{4} \Rightarrow \frac{2}{1} \Rightarrow \\ \text{Ստացել } \frac{3}{3} \text{ ման. } 2 \text{ ուշ. } 4 \text{ կ. } 1 \text{ դրչ.}$$

Որովհետեւ 1 գրօշից կարելի չէ հանել 2 գրօշ. և որովհետեւ կոպէկ և ուղալթուն բոլորովին չկան, ուստի պէտք է վերառնուլ 1 մանէթը և վերլուծել, ինչպէս արածէ տուած օրինակում, այսինքն հարկաւոր է 1 մանէթից վերառնուլ 1 ուղալ, իսկ ուղալթունից 1 կոպէկ. ուստի նուազելի թուում կունենանք 11 ման. 9 ուղալ. 9 կ. 3 գրօշ. 1 կ.=2 գրօշի. $2+1=3$, $3-2=1$, այս պատճառով մնացորդում գրած է 1 գրօշ. մնացած 9 կ.ից. հանած է 5 կ., մնացորդ ստացել ենք 4 կ., մնացած 9 ուղալթունից հանած է 7 ուղալ. մնացորդում ստացանք 2 ուղալ. մնացած 11 մանէթից հանած է 8 ման. մնացորդում ստացանք 3 մանէթ:

Աւրեմն 12 ման. 1 գրօշի և 8 ման. 7 ուղալ. 5 կ.
2 գրօշի մէջ եղած տարբերութիւնը = 3 ման. 2 ուղալ.
4 կ. 3 գրօշի:

Խնչպէս վերացեալ թուերի, նոյնպէս և անուանաւոր թուերի գումարումը և հանումը ստուգվում են մէկը

միւսով: Կառւմարման առաջին օրինակը ստուգելու համար հարկաւոր է ընդհանուր գումարից հանել երկրորդ և երրորդ թուերի գումարը, և կստանանք առաջին թիւը. հանումը ստուգելու համար հարկաւոր է հանելի թիւը գումարել մնացորդի հետ, և եթէ հանումը ուղիղ ենք շնորհ այդ գումարը պէտք է հաւասար լինի նուազելի թուին:

6	ման.	3	ուղ.	5	կ.	1	գրշ.	12	ման.	0	ուղ.	0	կ.	1	գրշ.
3	»	7	»	1	»	2	»	8	»	7	»	5	»	2	»
12	»	8	»	7	»	4	»	3	»	2	»	4	»	1	»
22	»	9	»	6	»	1	»	12	ման.	0	գրշ.	0	կ.	1	գրշ.
16	»	6	»	1	»	0	»								
6	ման.	3	ուղ.	5	կ.	1	գրշ.								

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԸՍՏԻՇԱՅԻ:

Բ ա զ մ ա պ ա կ ա մ կ ո ւ մ ն :

Վնանուն թուերի բազմապատկութեան մշջ երկու արտադրիչները, այսինքն բազմապատկելին և բազմապատկիչը, վերացեալ թուեր են, իսկ անուանաւոր թուերի բազմապատկութեան մշջ միայն բազմապատկելին է վերացեալ, իսկ բազմապատկելին միշտ և անպատճառ կամ սպարզ կամ բարդ անուանաւոր թիւ պէտք է լինի:

Խնչպէս վերացեալ թուերի բազմապատկութիւնը սկսվում է ստորին կարգի միութիւններից, նոյնպէս և անուանաւոր թուերի բազմապատկութիւնը սկսվում են ստորանուն թուից, ուստի և բազմապատկիչը գրվում է այդ թուի տակ: Կը եւ անուանաւոր թուի բազմապատկութիւ-

նից ստացած արտադրեալը աւելի է, քան թէ համապատշաճ յայտաբարը, այն ժամանակ հարկաւոր է նորան վերածել հետևեալ անուանաւորի և աւելացնել համանուն արտադրեալին, և եթէ մեացորդ մեայ, պէտք է դրել բաղմապատկած թուի տակ:

(Օրինակ, դիցուք թէ տուած է 5 վէրստ, 83 սժ. 2 արշ բաղմապատկելու 7-ով, նախ պէտք է բաղմապատկելու գրել բաղմապատկելուն տակ այսպէս

5 վ. 83 սժ. 2 արշ.

$\times \quad 7$

Յետոյ, ինչպէս ասացինք, պէտք է բաղմապատկութիւնը սկսել ստորանուն թուից, այսինքն արշինից, $2 \times 7 = 14$, 14 արշինը սաժէն դարձնելու համար հարկաւոր է 14 բաժանել յայտաբար թուի, 3-ի, կստանանք 4 սաժ. իսկ մեացորդում 2 արշ. այս մեացորդը պէտք է գրել արշիների տակ, իսկ 4 սաժէնը պէտք է զումարել յետագայ արտադրեալին հետ: 83 սաժ. 7-ով բաղմապատկելով կստանանք 581 սաժ., $581 + 4 = 585$, որովհետեւ 585 սաժէնը անում է 1 վէրստ և 85 սաժ. ուստի սաժէնները (85) պէտք է գրել սաժէնների տակ, իսկ 1 վէրստը պէտք է աւելացնել հետևեալ համանուն արտադրեալին, այն է $5 \times 7 = 35$ վ., $35 + 1 = 36$ վ., որը գրում ենք վէրստերի տակ: Ուրեմն ընդհանուր արտադրեալը կլինի

36 վ. 85 սժ. 2 արշ.

5 » 83 » 2 »

$\times \quad 7$

$= 36 \text{ վ. } 85 \text{ սժ. } 2 \text{ արշ.}$

$$\begin{array}{r}
 \text{Երկրորդ} \cdot \text{օրինակ}. \quad 14 \cdot \phi. \quad 0 \cdot \phi. \quad 8 \cdot L \cdot 1 \cdot q \cdot L \cdot \times 9: \\
 \quad 14 \cdot \phi. \quad 0 \cdot \phi. \quad 8 \cdot L \cdot 2 \cdot q \cdot L \\
 \quad \quad \quad \times \quad 9 \\
 \hline
 126 \rightarrow 2 \rightarrow 14 \rightarrow 0 \rightarrow
 \end{array}$$

$2 \cdot q \cdot L \cdot \times 9 = 18 \cdot q \cdot L$, $18 \cdot q \cdot L : 3 = 6$. $8 \cdot L \cdot \times 9 = 72$, $72 + 6 = 78$, $78 : 32 = 2 \cdot \phi. + 14 \cdot L$, $14 \times 9 = 126 \cdot \phi.$, $\text{ուրեմն } \text{ամբողջ } \text{արտադրեալը} = 126 \cdot \phi. \quad 2 \cdot \phi. \quad 14 \cdot L:$

ԱԵՑԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ:

Բ ա ժ ա ժ ա ն ս ւ մ շ ն ի:

Դաժանման միջնորդութեամբ կարելի է իմանալ
 1) թէ բաժանարարը քանի՞ անգամ է պարունակվում բաժանելուն մէջ, 2) թէ որքան կլինի իւրաքանչիւր մասը, եթէ բաժանելին բաժանենք այնքան մաս, որքան միաւորներ ունի բաժանարարը: Ուստի անուանաւոր թուերը բաժանելիս, կարող է երկու տեսակ հարց պատահել: 1) տուած անուանաւոր թուի մէջ քանի՞ անգամ է պարունակվում մի ուրիշ համանուն անուանաւոր թիւ. զորօրինակ. 6 փութը — 24 փութի մէջ. 2) տուած անուանաւոր թուի իւրաքանչիւր մասը որքան կլինի, եթէ այդ անուանաւոր թիւը այնքան մաս բաժանենք, ինչքան միաւոր ունի բաժանարարը, օրինակ. 24 գրուանքայ հացը, 6 հաւասար մաս բաժանած, որքան կլինի:

Եռաջի դիպուածում բաժանելի և բաժանարար թուերը անուանաւոր կլինին, այն ինչ քանորդը վերացեալ ($\frac{24}{6} = 4$), իսկ երկրորդ դիպուածում բաժանելին և քանորդը անուանաւոր թուեր կլինին, այն ինչ բաժանարար վերացեալ:

Առաջին գիպուած:

Դիցուք թէ 23 փ. 18 ֆ. 14 լ. սուած է բաժանելու 6 ֆ.-ի, և լ.-ի: Խմանալու համար թէ երկրորդ թիւը, փոքրագոյնը, քանի անգամ է պարունակվում առաջին թուի, մեծագոյնի, մէջ, հարկաւոր է երկու թուերը ևս գարձնել միատեսակ ստորանուն թուերի, այսինքն—լօտերի, յետոյ բաժանել, որով և կստանանք քանորդը:

23 փ. 18 ֆ. 14 լ : 6 փ. 4 լ

23 փ.	6 փ.	30030 196
×40	×32	196 153 $\frac{42}{196}$
920	192	1043
+18	+4	980
938 փ.	196 լ	630
×		588
1876		42
2814		
30016		
+14		
30030 լ		

Ուրեմն 6 ֆ.-ը 4 լ-ը—23 փ.-ի, 18 փ.-ի, 14 լ-ի
մէջ պարունակվում է $153 \frac{42}{196}$ անգամ:

Երկրորդ գիպուած:

38 ման. 7 ուղ. 6 կ. 4 մաս բաժանելու համար,
տուած թուերը նախ և առաջ պէտք է գրել այն կար-
գով, ինչպէս գրվում են առ հասարակ վերացեալ թուերը
բաժանման մէջ, այն է

38 ման. 7 ուղ. 6 կ. 4

Վնուանաւոր թուերի բաժանումը նոյնպէս սկսվում
է բարձրանուն թուից:

Եթէ 38 ման. 4 մաս բաժանենք, իւրաքանչիւր
մասը կլինի 9 ման. իսկ մնացորդ—2 ման., ուստի քա-
նորդում գրում ենք 9 մանէթ. իմանալու համար թէ քա-
նորդում բացի 9 մանէթից ինչքան ուղալթուն կայ, նախ
հարկաւոր է մնացած 2 մանէթը ուղալթունների դար-
ձնել, բազամապատկելով նորան (2 մնթ.) յայտարարով
(10) և յետոյ ստայած 20 ուղալթունն աւելացնել բա-
ժանելու մէջ եղած 7 ուղալթունը, որից կստանանք 27
ուղալթուն. բաժանելով 27 ուղալթունը նոյնպէս 4-ի,
կստանանք 6 ուղալթուն, իսկ մնացորդը կլինի 3 ուղալթուն,
ուրեմն քանորդում կգրենք 6 ուղալթուն, իսկ մնացորդը
կդարձնենք կոպէկի և ստացած արտադրեալի հետ կդաւ-
մարենք բաժանելի թուում եղած 6 կոպէկը և յետոյ
բոլոր գումարը, 36 կոպ., կբաժանենք 4-ի և կստանանք 9
կոպ., որը կգրենք քանորդում. ուրեմն ամբողջ քանորդը
կլինի 9 մնթ., 6 ուղալ. և 9 կոպ.

$$\begin{array}{r}
 38 \text{ } maw. \quad 7 \text{ } nuq. \quad 6 \text{ } q. \boxed{4} \\
 36 \qquad \qquad \qquad \qquad \boxed{9} \text{ } maw. \quad 6 \text{ } nuq. \quad 9 \text{ } q. \\
 \hline
 2 \text{ } maw. \\
 \times 10 \\
 \hline
 20 \text{ } nuqawL \\
 + 7 \\
 \hline
 27 \boxed{4} \\
 24 \boxed{6} \text{ } nuqawL \\
 \hline
 3 \\
 \times 10 \\
 \hline
 30 \\
 + 6 \\
 \hline
 36 \boxed{4} \\
 36 \boxed{9} \text{ } qnuq. \\
 \end{array}$$

» »

Հարթ մասներ:

Երկայնութեան, քառակուսի և խորանարդ չափերի մէջ
ի՞նչ զանազանութիւն կայ:

Քառակուսի և խորանարդ չափերը ի՞նչպէս պէտք է
իմանալ:

Քանի արտադրիչ կայ քառակուսի չափում, և քա-
նի — խորանարդում:

Ի՞նչ է քառակուսին, և ի՞նչ է խորանարդը:

Կարելի է արգեօք քառակուսի և խորանարդ չափերով
չափել չեղուկ և ընդեղէն նիւթեր:

Յայտաբար թիւը ի՞նչ է:

Ա երածման և կոտորման գործը ի՞նչ է:

Անուանաւոր թուերը քանի տեսակ կարող են լինել:

Պարզ և բարդ անուանաւոր թուերի կոտորումն ի՞նչպէս
պէտք է կատարել:

Ա երածումը կատարելու համար ի՞նչ տեսակ անուա-
նաւոր թուեր պէտք է ունենալ, պարզ թէ բարդ:

Ի՞նչ պատճառով կոտորումը ստուգվում է վերած-
մամբ, և ընդհակառակն, վերածումը—կոտորմամբ:

Ի՞նչ նմանութիւն կայ անուանաւոր և վերացեալ թուե-
րի գումարմանց մէջ:

Եթէ մի օր և իցէ անուանաւոր թիւ գումարելուց
ստացված գումարը աւելի է քան թէ համապատշաճ
յայտարարը, այն ժամանակ ի՞նչ պէտք է անել նորան:
Կարելի՞ է արդեօք գումարել պարզ անուանաւոր թուե-
րը:

Անուանաւոր թուերի հանումն ի՞նչով է նման անուա-
նաւոր թուերի գումարմանը և վերացեալ թուերի հան-
մանը:

Անուանաւոր թուերի գումարումն կարելի՞ է հանու-
մով ստուգել, և ընդհակառակը, հանումը—գումարումով:

Անուանաւոր և վերացեալ թուերի բաղմապատկու-
թեան ժամանակ արտադրիչները ի՞նչով են զանազանվում
միմանցից:

Անուանաւոր թուերի բաղմապատկութիւնը ի՞նչ թուից
է սկսվում, և իւրաքանչիւր բաղմապատկեալ թուի տակ
բոլոր մասնաւոր արտադրեալն է՝ գրվում, թէ օչ:

Անուանաւոր թուերի բաժանման ժամանակ ի՞նչ երկու
գիպուած կարող է պատահել:

Ո՞րպիսի գիպուածում քանորդը կլինի վերացեալ և
ո՞րպիսի գիպուածում անուանաւոր:

Խնդիրներ:

Օ ք ի ն ա կ թ ա ւ ե ր ի գ ո ւ մ ա ր մ ա ն հ ա մ ա ր մ ա ր :

Մի երեխայ ասաց իւր ընկերին. Իմ փոքրիկ եղբայրս 8 տարեկան, 4 ամսական և 8 օրական է, ես 2 տարով և 9 ամսով մեծ եմ նորանից, իսկ մեծ եղբայրս 3 տարով, 2 ամսով և 25 օրով մեծ է ինձանից, հայրս 25 տարեկան էր երբ որ մեծ եղբայրս ծնաւ, ուրեմն իմացիր, հայրս քանի տարեկան է այժմ։

Ի՞նչ պէտք է իմանալ. Արգեօք հօր բոլոր տարիքը անյայտ է։ «Եռաւ տարիներից ո՞ր մասն է յայտնի։ Աօք տարիների անյայտ մասը գտնելու համար ո՞ւմ տարիները պէտք է աւելացնենք նորա տարիների յայտնի մասին։ Ի՞նչպէս կարելի է իմանալ մեծ եղբօք քանի տարեկան լինելը։—Իսկ միջնակին։ Եթէ բոլոր տուած թուերը գումարենք, ի՞նչ կստանանք։

«Աօք բոլոր տարիների գումարը...»

8	աւ.	4	ամ.	8	օր
2	»	9	»	—	»
3	»	2	»	25	
25	»	—	»	—	»
39	»	4	»	3	»

Ուրեմն հայրը այժմ է

39 տարեկան 4 ամսական և 3 օրական։

Իմացիր, հայրը քանի տարեկան էր երբոր ծնվեցաւ միջնակ որդին, —փոքրիկը։

Եթէ զիտենք հօր տարիները և մեծ որդու ծնած
ժամանակը, ինչպէս պէտք է իմանանք այդ որդու տա-
րիները:

Ո՞ի և նոյն կերպով պէտք է քննել անուանաւոր
թուերի միւս գործողութիւններին վերաբերեալ օրի-
նակները:

ՅՈՒՅՈՒԹԱԴԵԼՎԵՆԵՐԻ:

